

# ՆՈՐ ԶՈՒՄ

ՏԵԳԵԿԱՏՈՒ ՄՊԱՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

ԺԳ ՏԱՐԻ

ԹԻՒ ՈՒՅ

ՄԱՐՏ ԱՊՐԷԼ 2016





## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵԱՆ ԳԻՆՆԵՆՔ



Բարով հասանք Սուրբ Յարութեան՝ քրիստոնեայ աշխարհի ամենամեծ յաղթանակի տօնին. տօն, որ պատմութեան մէջ նոր շարժման, նոր կեանքի տօնն է՝ յաւերժօրէն ապրելու անվախճան կեանքի տօնը: Մարդու հոգեւոր վերածննդեան տօնն է. տօնը՝ մարդու բարոյական կատարելութեան. տօնը՝ հաւատի, կեանքի եւ սիրոյ:

Եւ ահա այս մեծ տօնինն, արեւածագի լոյսի շողերով Աստուածաշնչից առաքելական պատգամն է հռչակուում. *«Աստուած մեզ համար մեղքի պատարագ արեց Քրիստոսին, Նրան՝ Ով բնաւ մեղք չէր գործել, որպէսզի մենք միանալով Նրան՝ արդարանանք Աստծու համար»* (Բ.Կր 5.21):

Քրիստոսը որպէս Գառն Աստծու պատարագւեց: Անմեղը մեղքն Իր վրայ վերցրեց՝ մեղաւորի համար: Ո՞վ է մեղաւորը եւ ի՞նչ մեղքի մասին է խօսքը. ինչո՞ւ Տէրը ծառայի կերպարանք ստացաւ եւ ինչո՞ւ մեղքը Իր վրայ վերցրեց. հարցեր, որոնք մեզանից իւրաքանչիւրին են ուղղուած այսօր. հարցեր, որոնք մեզանից իւրաքանչիւրն ուղղում է այսօր եւ պատասխան ակընկալում:

Ո՞վ է մեղաւորը. պատասխանը հենց Աստուածաշունչն է տալիս, նախածնողները՝ Ադամն ու Եւան. մար-

դը՝ եւ ու դու, մենք՝ բոլորս՝ ադամական մեղքով ծնւածներս:

Ի՞նչ է մեղքը, որի պատճառով դարձանք մեղաւոր: Պատասխանը դարձեալ Աստուածաշնչից քաղենք. դա անհնազանդութիւնն էր աստուծային պատկերանների նկատմամբ: Աստուած Իր պատկերի համաձայն ստեղծեց մարդուն, սակայն մարդը իր անհնազանդութեամբ՝ օրինազանց պահածքով, հեռացաւ Աստծուց, հեռացաւ իր դրախտային կեանքից, հեռացաւ ճշմարիտ լոյսից, դառնալով խաւարի բնակիչ. խաթարեց իր աստուծային պատկերը չարի, չարութեան, օրինազանցութեան պատճառով, եւ սահմանեց մահը:

Բայց Աստուած մարդուն չլքեց, չհեռացաւ մարդուց, այլ միշտ Իր փրկարար ձեռքը մեկնեց մարդկութեան բոլոր ժամանակներում, բոլոր վայրերում, յոյսի եւ լոյսի պատգամ տալով, նահապետների, օրէնքի, մարգարէների, դատաւորների, թագաւորների առաքմամբ, իսկ երջանիկ մի ժամանակահատուածում ուղարկեց Իր Միածին Որդուն, որ մարդկանց մեղքն Իր վրայ վերցնի, մաքրի ու սրբի նրանց:

Բայց ինչո՞ւ Նա մեղքն Իր վրայ վերցրեց: - Նա մեղքն Իր վրայ վերցրեց, որովհետեւ չդադարեց մեզ սիրելուց:

Նայենք Քրիստոսի տնօրինական կեանքին՝ Ծնունդից մինչեւ Խաչելութիւն եւ Թաղում, Բեթղեհէմից մինչեւ Գողգոթա եւ այս պատկերի մէջ տեսնում ենք, որ Աստծու Որդին աշխարհ եկաւ փնտրելու կորածը՝ կորած մարդը, կորած հոգին, որ ընկել էր մեղքի տիղմի մէջ: Մեր աչքի առաջ նկարուում է պատկերը այն կնոջ, որ իր դրամն էր կորցրել, եւ փնտրեց իր տան մէջ ու գտաւ այն. պատկերը այն մարդու, որ մի ոչխար կորցրեց ու փնտրտուքի ելաւ՝ այն գտնելու համար. պատկերը այն սպասող հօր, որ կրկին գրկաբաց ողջունեց եւ ընդունեց իր անառակ որդուն: Մի խօսքով *«Մարդու որդին եկաւ՝ փնտրելու եւ փրկելու կորածին»* (Ղկ 19.10): Ինչպէս Տէրն է ասում. *«Ես եկայ, որպէսզի կեանք ունենաք եւ կեանքը լինի առաւել լեցուն»* (Յհ 10.10):

Այդ փնտրտուքի մէջ, Նա անդադար խօսեց, պատգամեց, ուղղութիւն տուեց լոյսի ճանապարհը ցոյց տուեց, ապաշխարութեան հրաւիրեց՝ դարձի գալու, մեղքից հեռանալու, Աստծուն դառնալու, հինը տաճելու, հին մարդը գերեզմանելու եւ դառնալու նոր արարած: Ահա այն լոյսը՝ Յիսուսի խօսքով ճառագում: «*Ես եմ աշխարհի լոյսը, ով որ Ինձ հետեւի, խաւարի մէջ չի քայլի, այլ կուեննայ լոյսը, որ առաջնորդում է դէպի կեանք*» (Յհ 8.12): Ահա այն կերակուրը՝ Յիսուսի խօսքով բաշխւած. «*Ես եմ կեանքի հացը: Ով գալիս է դէպի Ինձ, քաղց չի գգայ բնաւ, եւ ով հաւատում է Ինձ, չի ծարաւի երբէք*» (Յհ 6.31): Ահա այն ճանապարհը՝ աստուծային խօսքով պատգամւած. «*Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը*»: Նա կամեցաւ ասել՝ եթէ հետեւէք Ինձ, քայլէք Իմ բացած ուղիով, ձեր խաչը վերցնէք ու հետեւէք Ինձ, այն ժամանակ կարող էք հասնել ճշմարտութեան եւ ժառանգել կեանքը յափտեմական, որ վերապահւած է ձեզ:

Ահաւասիկ գերազանց պատճառը՝ ինչու անմեղը մեղաւորի համար պատարագւեց, Անմահը մահը ընդունեց, Անհունը հունաւորի մէջ սահմանեց, Աստուած Իր բարձունքից խոնարհեց, Երկնայինը երկրաւոր կեանք ընդունեց, Թագաւորը՝ ծառայ, Քահանայապետը սպասաւոր դարձաւ: Մի խօսքով՝ Նա Իր ամենաթանկ գինը վճարեց, Իր կեանքը տուեց, զոհագործեց ինձ եւ քեզ համար՝ մեզ համար, ողջ մարդկութեան համար՝ վերստին մեզ ծնելու, կենդանի յոյսը տալու, մեր փրկութիւնը ապահովելու, մեզ արդարացնելու, մեր մեղքերին քաւութիւն եւ թողութիւն տալով, որպէսզի «*Ժառանգենք անեղծ, անարատ եւ անթառամ կեանքը, որ երկնքում պահւած է մեզ համար*» (Ա.Պոտ 1.4):

Այս պայծառ առաւօտեան հոշակւեց. «*Ես եմ յարութիւնը եւ կեանքը*», եւ Նրա խօսքերը իրականացան: Այո՛, Նա մատնեց, չարչարեց, խաչեց մահացաւ ու թաղւեց, սակայն երրորդ օրը յարութիւն առաւ: Նրա յարութեամբ վիմափոր կոյս գերեզմանի քարերը ճեղքւեցին, մահը իր վախճանին հասաւ, դժոխքի դռները խորտակւեցին եւ կեանքի լոյսն է, անմահութեան յոյսն է, որ ճառագայթեց ամենուրեք, ճախրեց հորիզոնից-հորիզոն, աշխարհով մէկ, ու լցրեց մարդկանց հոգիները:

Ահա նորից բացւեց դրախտի դուռը մեր առաջ եւ մենք դարձանք Իր թագաւորութեան արժանի ժառանգորդները:

Մարդու ձեռքով խաչափայտի անարգ մահուան դատապարտւած Յիսուսը յարութիւն առաւ՝ «*Որպէսզի Նա լինի մեր առաջնորդն ու փրկիչը եւ մեզ տայ ապաշխարութեան առիթ եւ մեղքերի թողութիւն*» (Գրծ 5.30-31):

Արդարեւ Աստուած յարութիւն տուեց Յիսուսին՝ մեզ արդարացնելու. Աստուած յարութիւն տուեց Յիսուսին՝ մեզ նոր կեանք պարգեւելու, Աստուած յարութիւն տուեց Յիսուսին, որպէսզի ուժ տայ մեզ՝ ներկայի մէջ ապրելու, եւ Աստուած յարութիւն տուեց Յիսուսին, որպէսզի յոյսը ունենաք գալիքի՝ յափտեմական կեանքի:

Ահա թէ ինչո՛ւ մենք Քրիստոսի արեան գինն ենք եւ այս ճշմարտութիւնը պարտաւորեցնող է՝ մեր կեանքերը ընդմիշտ դիտելու յարաբերաբար յարուցեալ Փրկչին, հաւատալով Նրան, Նրա Աստուածութեանը, Նրա Մարդեղութեանը, Նրա Խաչելութեանը, բայց մանաւանդ՝ Նրա հրաշափառ Յարութեանը:

\*\*\*

Հայ ժողովուրդն իր ողջ պատմութեան ընթացքում հաւատաց յարութեանը եւ դարձաւ ճշմարիտ հետեւորդը Յարուցեալի. հաւատաց «(Թափուր գերեզման)»-ի իրականութեանը, նայելով միշտ վաղւաճ, գալիքին, Մեծ Արշալոյսին. երբէք չտկարացաւ, չուսահատուեց, չընկճուեց, որովհետեւ «(Խաչն էր վերցրել իր ուսերի վրայ)» եւ դարձել Աստուածորդու ճշմարիտ հետեւորդը, հաստատելով իր հաւատը, որ մեղքը չի յաղթել, յաղթողը Քրիստոսն է, մահը չի յաղթել, յաղթողը Քրիստոսն է, որ յաւերժօրէն ապրելու ու գոյատեւելու խորհուրդն ու յոյսը տուեց մեզ:

Տարածենք յաղթանակի այս լուրը ասելով՝

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ,  
ՄԵՁ ԵՒ ՁԵՁ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ:**

ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ  
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ





գէն արք. Չարեանն իր խօսքի շարունակութեան մէջ ներկայ աշակերտութեանը յորդորեց՝ մեր արդար իրաւունքների պաշտպանը լինել, սերտել հայոց պատմութիւնը եւ անաղարտ պահել մայրենի լեզուն:



Սրբազան Հայրը նշելով նաեւ, որ հայ ժողովուրդը նոյն միակամ կեցածքով է պայքարելու ադրբեջանական բարբարոսութիւնների դէմ եւ աշխարհասփիւռ հայութիւնը կանգնած է Արցախում մարտըն-

չող իր հայրենակիցների կողքին, գնահատանքի խօսք ուղղեց հայրենիքը պաշտպանող հերոսներին ու նրանց համար անվտանգ ծառայութիւն խնդրեց Բարձրեալից: Նա իր խօսքի վերջին բաժնում, օրինակ վերցնելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետից, պատգամեց «Միացէ՛ք հայեր» երգի հետեւեալ բառերը՝ «Միացէ՛ք հայեր, միացէ՛ք հայեր, Արցախն է մեզ կանչում օգնութեան հասէ՛ք», որից յետոյ բոլորը մէկ ձայն դարձած կատարեցին այս ոգեշնչող երգը: Ծրագիրն աւարտեց ծաղիկների մատուցման արարողութեամբ:

Համահաւաքին ներկայ էին գտնելու աշակերտութեան ծնողները: Ս. Ամենափրկչեան վանքի թանգարանի այցելուներին նոյնպէս հետաքրքրեց միջոցառումը, ովքեր որպէս հանդիսատես հետեւեցին ծրագրին՝ ներկաներից համապատասխան բացատրութիւններ ստանալով Հայոց Յեղասպանութեան իրողութեան մասին:



**ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԽՈՒՌՆԵՐԱՄ ԾԱՐՔԵՐՈՎ ՄԱՍՆԱԿՅԵՅ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 101-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ**

Շաբաթ՝ ապրիլի 23

Օժուած սրբապատկերները տեղադրուելու են Նոր Զուղայի եւ Ծափնշահրի եկեղեցիներում:

Երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանի նախագահութեամբ եւ թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ կատարեց Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակների Բարեխօսական կարգը:

Բարեխօսական աղօթքի աւարտին Սրբազան Հօր ձեռամբ սրբալոյս Միւռնով օծեցին Հայոց Յեղասպանութեան սրբադասաւած նահատակների սրբապատկերները, որոնք պատրաստուել էին թեմակալ առաջնորդի եւ Կրօնական խորհրդի որոշմամբ՝ նախորդ տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նահատակների սրբադասման ընթացքում զոյգ Վեհափառ Հայրապետների միջոցով օծուած երկու սրբապատկերների բնօրինակի համաձայն: Սոյն պատկերներն օծելու համար սուրբ խորանի առջեւ բերեցին նւիրատուների միջոցով, ովքեր հոգացել էին դրանց պատրաստման ծախսը:



Օժումից յետոյ Սրբազան Հայրը բացատրելով, որ հայ եկեղեցին իր սուրբ նահատակների յիշատակը ոգեկոչում է Բարեխօսական աղօթքով, իր գնահատանքի խօսքն ուղղեց սրբապատկերների պատրաստման համար նւիրատուութիւն կատարած անհատներին:

Ապա միասնական Տէրունական աղօթքը հնչեց առ Աստուած, որից յետոյ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանի, Իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատու Ռոբերտ Բեգլարեանի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ու ազգային մարմինների անդամների գլխաւորութեամբ մեկնարկեց մոմերով երթը: Ներկաները խորհրդաւոր լուութեան ներքոյ, լուսատու մոմերն իրենց ձեռքում պահած, քայլեցին դէպի Ս. Ամենափրկչեան վանքը տանող Արեւմտեան ու







թեամբ, գաղափարով ու զէնքով ձեռք բերած հզորությունը, որել է իրաւունք չի կարող արդարացի ձեռք բերել, եւ ելնելով այդ իրողութիւնից ու յատկապէս հայ ժողովրդի անվտանգութեան համար պէտք է մեր կամքով ու մեր անյողդողդ քայլերով շարունակենք հայկական պահանջատիրական պայքարը:

Որպէս համահաւաքի եզրափակիչ խօսք՝ ժողովրդին իր հայրական պատգամն ուղղեց առաջնորդ Սրբազան Հայրը: Գերշ. Տ. Բարբէն արք. Չարեանը անդրադառնալով Թուրքիայի կողմից մինչեւ օրս կիրաւուած պատմութեան խեղաթիւրման քաղաքականութեանը, շեշտեց, որ արդարութիւնը յաղթանակելու է, ճշմարտութիւնը չի գերեզմանելու եւ անպայմանօրէն տարածելու է ամէն տեղ:

Սրբազան Հայրն կարեւորութեամբ նշելով մերօրեայ պայմաններում Թուրքիայի եւ Ադրբեջանի հայատեսացութեան քաղաքականութեան հետեւանքով իրագործուած ոճրագործութիւնները, ինչպիսիք են՝ Սումգայիթի կոտորածները, Հրանդ Դինքի սպանութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի սահմանում իրականացուած ռազմական սադրիչ գործողութիւնները, աւելացրեց, որ հայ ժողովուրդն այլեւ լացող ժողովուրդ չէ եւ իր պահանջատիրական պայքարը շարունակում է զանազան հարթակների վրայ: Նա իր խօսքի աւարտին անդրադառնալով վերջերս զոյգ Վեհափառ Հայրապետների Արցախ կատարած այցելութեանը՝ ի զօրակցութիւն Լեռնային Ղարաբաղի իշխանութեան ու ժողովրդի, կոչ արեց միակամ կեցածքով օգնութեան հասնել Արցախին, նոյն կամքով եւ յաղթանակի ոգով շարունակել պահանջատիրական պայքարը եւ հայկական եռագոյն դրօշը ծածանել Արարատի գագաթին:

Սրբազան Հօր պատգամից յետոյ ժողովուրդը ծաղիկներ մատուցեց եւ մոմեր վառեց ոչ միայն Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակների յիշատակը ոգեկոչելու, այլեւ նոր նահատակների՝ արցախեան գոյամարտում ընկած հերոսների յիշատակը վառ պահելու համար:

Յատկանշական է, որ ծրագրի ընթացքում գեղարուեստական կատարումներ իրականացւեցին օրւան պատշաճ երգերով ու ասմունքներով: Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Համիկ Ալեք-



սանդրեանի հանդէս եկաւ «Ոգերգ նահատակաց», «Ապրիլեան նահատակներուն», «Խաղաղ դաշտի որդիք», «Սասուն» եւ «Քաջ Անդրանիկ» երգերով, Վերգինէ Համբարձումը ասմունքեց «Մենք», իսկ Նարեգա Սիմոնեանը՝ «Ես Հայաստան, ես քարէ» բանաստեղծութիւնները: Մենակատարեցին Վեդի Յարութիւնեանը՝ «Տունն իմ հայրենի» եւ Մասիս Պարսամեանը՝ «Հրով լինի» երգերը:



Նոյն երեկոյ, Հ.Յ.Դ. «Թաղէոս Թաղէոսեան» պատանեկան միութեան նախաձեռնութեամբ կազմակերպւել էր բողոքի նստացոյց՝ Նոր Զուղայի պատանիների մասնակցութեամբ:



Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան եւ Ս.Ա. Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի համատեղ նախաձեռնութեամբ,



վանքի շրջափակում օրւայ առթիւ կազմակերպւել էր գրքի ցուցահանդէս:

Համահաւասքին զուգահեռ Եղեռնի զոհերի յուշարձանի շուրջ անմար ջահերով հսկումի արարողութիւն կատարւեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամների միջոցով:

Աւանդոյթի համաձայն տեղի ունեցաւ նաեւ արեան տւշութիւն:

\*\*\*

**Կիրակի՝ ապրիլի 24**

Առաւօտեան ժամը 9:30-ին, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, նախագահութեամբ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանի եւ մասնակցութեամբ թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի, մատուցւեց Ս. Պատարագ: Օրւայ պատարագիչն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը:

Այնուհետեւ վանքի շրջափակում կայացաւ ծաղիկների մատուցման արարողութիւնը, որտեղ սկզբում Սրբազան Հօր գլխաւորութեամբ, թեմի հոգեւորականաց դասը, ազգային մարմինների ու շրջանի հայ Դատի յանձնախմբի անդամները եւ Նոր Զուղայի ու Ծախիճախի միութիւնների վարչութիւնները եւ հայոց ազգային դպրոցների պատասխանատուները, ապա ներկայ ժողովուրդը ծաղիկներ մատուցեցին յուշարձանին՝ ի յիշատակ բիրաւոր նահատակների:

Յաջորդիւ նստացոյցի կազմակերպիչ Հ.Յ.Դ. «Թաղէս Թաղէսեան» պատանեկան միութեան խօսքն ընթերցւեց Վանէ Յարութիւնեանի միջոցով, որտեղ նա ընդգծելով, որ ցեղասպանին անպատիժ թողնելով աշխարհում նորանոր յանցագործութիւնների իրագործման առիթ է ստեղծւել, ասաց. «Օրեր առաջ դարաբաղա-աղբբեջանական սահմանի վրայ Աղբբեջանի կողմից իրականացւած ռազմական սադրիչ գործողութիւններն ու այդ շրջագծում Արցախի խաղաղ բնակչութեան եւ հայկական բանակի զինուորների նկատմամբ կիրառւած խոշտանգումներն ու դաժանաբար սպանութիւնները, ի՞նչ կարելի է համարել, եթէ ոչ ցեղասպանի անպատիժ մնալու հետեւանք: Միթէ ակնյայտ չէ՞, որ սա էլ նոյնպէս թուրքի ձեռագիրն ու գործելակերպն է»: Պարմանուհին խօսքն աւարտեց խոստանալով, որ պա-

տանիներն ամենայն վճռակամութեամբ շարունակելու են հայոց պահանջատիրական պայքարը՝ մինչեւ հայ ազգի արդար իրաւունքների վերականգնումն ու ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտումը:



Միջոցաւման շարունակութեան մէջ խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը յայտարարեց, որ վերջին տեղեկութիւնների համաձայն կառավարութեան մակարդակում տեղի ունեցած մի շարք վարչական անհամաձայնութիւնների պատճառով, նախապէս արտօնւած քայլարշախի թոյլտուութիւնը բեկանւել է: Ապա նա Իրանի պետական այրերին յիշեցնելով, որ իրանահայութիւնը միշտ ըմբռնումով է մօտեցել երկրի շահերի նկատմամբ եւ իր զաւակների արեամբ է մասնակից եղել Իրանի հողային ամբողջականութեան պաշտպանման գործին, յոյս յայտնեց, որ քայլարշախն արտօնութիւն չտալը լոկ թիրիմացութիւնների արդիւնք է:

Պատգամաւորի յայտարարութիւնից լետոյ բողոքի համահաւաքը շարունակեց պահանջատիրական լոզունգների վանկարկումներով, որն աւարտեց օրւայ բանաձեւի ընթերցմամբ ու միասնական հաստատմամբ:



Այնուհետեւ պահանջատէր ժողովուրդը ինքնաբոլխ կերպով Ս. Ամենափրկչեան վանքից քայլեց դէպի Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն եւ անցնելով Հաքիմ Նեզամի ու Խաղանի գլխաւոր պողոտաներով, վեր բարձրացրած բունցքներով դարձեալ վանկարկեց դատապարտող եւ հատուցում պահանջող կարգախօսներ: Յոյցն աւարտեց «Արարատ» միութեան շրջափակում:

Կիրակի առաւօտեան վանքում կայացած բողոքի համահաւաքը նոյնպէս վարեց Ադրիւնէ Ղեւեանը: Երկօրեայ եկեղեցական արարողութիւնների ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի:



### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 101-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հայոց Ցեղասպանության 101-ամեակի ոգեկոչման շրջագծում, երեքշաբթի՝ ապրիլի 26-ի երեկոյան, Նոր Զուղայի Հայ Մ.Ս. «Արարատ» միության մարզասրահում իրականացրեց դասախօսական-գեղարվեստական երեկոյ:

Ձեռնարկի մեկնարկը տրեց մէկ բոպէ յոտնկայս լուծեամբ՝ յարգանքի տուրք մատուցելով Հայոց Ցեղասպանության բիրաւոր նահատակների եւ արցախեան վերջին իրադարձութիւնների ընթացքում զոհուած հերոսների յիշատակին: Ապա երեկոյի հաղորդավար Ադրինէ Ղեւեանն իր խօսքում անդրադառնալով 101-ամեակի ոգեկոչման ձեռնարկներին թեմի ժողովրդի խոուներամ մասնակցութեանը, ասաց. *«Գիտակցենք, որ այս պահանջատիրութեան յաջողութեան գրաւականը հնարաւոր է համակարգւած, անմնացորդ ու ամբողջական մասնակցութեամբ, չյոգնող ու չվարանող գործունէութեամբ: Գիտակցենք ու համոզւենք, որ դա մեր առօրեան է, մեր կեանքի մի կարեւոր բաժինը, մեր մտածումների եւ մտահոգութիւնների գերագոյն խնդիրն ու օրակարգը»:*

յառկայէս 1948 թականին Մ.Ա.Կ.-ի կողմից ընդունւած ցեղասպանութիւնը բացատրող բանաձեւին, ընդգծեց, որ վերջին յիսուն տարիները նշանաւորել են Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղիութեամբ լուրջ քայլերով, եւ որ Հայաստանի Հանրապետության անկախացումից յետոյ այդ գործընթացը մտել է աւելի կազմակերպական շրջանի մէջ, քանի որ ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգում ամրագրել է ճանաչման եւ դատապարտման քաղաքականութիւնը:



Ծարունակութեան մէջ պրն. Ալեքսանեանը անդրադառնալով Հայոց Ցեղասպանության 100-ամեակի շրջագծում ձեռքբերումներին եւ այն հանգամանքին, որ Թուրքիան Գալիպոլիի տօնակատարութիւններով չսաջողեց սուտերել 100-ամեակի միջոցառումները, յիշեցրեց, թէ Թուրքիան հենց առաջինն է եղել, ով քայլ է կատարել Հայոց Ցեղասպանության ճանաչման ուղիութեամբ՝ 1919 թականին Երիտթուրքերի դատաւարութեան կազմակերպմամբ:

Այնուհետեւ դասախօսութեամբ ելոյթ ունեցաւ Հայաստանից ժամանած ազգային-հասարակական գործիչ, Երեւանի Պետական համալսարանի Իջեւանի մասնաճիւղի Հումանիտար ֆակուլտետի դեկան եւ Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն մարմնի անդամ Վարդան Ալեքսանեանը:

Նա իր խօսքի առաջին բաժնում թարկելով ցեղասպանական բնոյթի գործողութիւնների բնութագրիչները՝ ինչպիսիք են՝ պլանատրումը, ժամկէտների ընտրութիւնը, համապարփակութիւնը, տեխնոլոգիական պատրաստածութիւնը եւ գաղափարախօսական հիմնաւորածութիւնը, աւելացրեց, որ նշուած բնութագրիչներով առաջին ցեղասպանութիւնը մարդկութեան պատմութեան մէջ իրականացրեց Օսմանեան Թուրքիայի միջոցով Արեւմտեան Հայաստանում:

Այնուհետեւ դասախօսը պատմական դիտանկիւնից անդրադարձ ունենալով Հայոց Ցեղասպանութեանը եւ





Դասախօսն իր խօսքում շեշտելով, որ այսօրայ թուրքիան պէտք է քաջութիւն ունենայ ստանձնելու իր նախնիների կողմից կատարած յանցագործութիւնների պատասխանատուութիւնը եւ առերեսելու պատմութեան հետ, անդրադարձաւ նաեւ արցախեան քառօրեայ պատերազմին ու Արցախի խաղաղ բնակչութեան եւ բանակի զինորների նկատմամբ ադրբեջանական կողմի կիրառած անմարդկային ու բարբարոսական արարքներին եւ գնահատանքի խօսք ուղղեց Արցախը պաշտպանելու ու արցախահայութեանը զօրակցելու ուղղութեամբ՝ համայն հայութեան դրսեւորած միակամ կեցածքի առթիւ: Նա աւելացրեց, որ բոլորիս թիրախը պէտք է լինի հայոց հզօր պետականութեան ստեղծումը եւ պէտք է պայքարենք յանուն ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի կերտման:



Դասախօսական ելոյթին յաջորդեց օրան պատշաճ եւ անզուգական գեղարեստական ծրագիրը, ուր որպէս հիմնական կատարող՝ հայ երգը հնչեցրեց պոլսահայ հանրայայտ երգչուհի Սիբիլը: Ընթացքում պարային համարների կատարումներով հանդէս եկան Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» եւ Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոունկ» պարախմբերը, իսկ ասմունքեցին նոյն միաւորի «Կոունկ» ասմունքի խմբի անդամուհիներ՝ Ալինա Տէր-Սուքիասեանը, Լալազէ Իսաղուլեանն ու Մեղրի Ղուկասեանը՝ Ռիմա Սիմոնեանի ղեկավարութեամբ: «Էրեբունի» պարախմբի ղեկավարն էր Ալինա Գրիգորեանը, իսկ «Կոունկ» պարախմբինը՝ Նունէ Մկրտչեանը:

Երեկոյի եզրափակիչ խօսքն ասաց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը:

Արբազան Հայրը գնահատանքի խօսք ուղղելով համայն հայութեանը եւ մասնաւորապէս թեմիս ժողովրդին՝ խուճերամ շարքերով 101-ամեակի միջոցառումներին մասնակցելու եւ պահանջատէր լինելու համար, կարեւորութեամբ շեշտեց, որ արդարութիւնը յաղթանակելու է եւ հայ ժողովուրդն իր միակամ կեցածքով տէր է կանգնելու իր արդար իրաւութեան:



Պատգամի շարունակութեան մէջ թեմակալ առաջնորդը յիշեցնելով հայոց պատմութեան տարբեր հանգրուաններում եւ յատկապէս օրհասական ժամանակներում հայրենիքը թշնամու ոտնձգութիւններից պաշպանելու ուղղութեամբ հայ ժողովրդի ցուցաբերած միասնական կեցածքը, աւելացրեց, որ նոյն գիտակցութեամբ այսօր մեր բոլոր հնարաւորութիւններով պէտք է լինենք Արցախում մարտնչող մեր հերոսների կողքին:

Նա վերջում յաղթական աղօթք բարձրացնելով առ Աստուած արտասանեց հետեւեալ տողերը.

*«Դուն՝ Տէ՛ր, միշտ պահիր անասան,  
Դիւցազնական մեր Հայաստան,  
Տո՛ւր յարտեւ խաղաղութիւն,  
Տո՛ւր կեանք, լոյս եւ ազատութիւն  
Հայ դրօշով մեր պետական  
Թող մեր ազգն ապրի յաւիտեան»:*

Ծրագրին ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներ եւ հոծ ժողովուրդ:





### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐԵԱՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Թեմիս Թեմական խորհրդի հրաւերով, թականիս փետրարի 29-ին Նոր Զուղա ժամանեց Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն Տիգրան Զարգարեանը:

Այցի նպատակն էր՝ ծանօթանալ Ս.Ա. Վանքի «Ս. Ներսէս Ընորհալի» գրադարանի հնատիպ գրքերի հաւաքածոյի եւ մամուլի հետ, ուսումնասիրել առկայ նիւթերի թայնացման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ մեթոդական աջակցութիւն ցուցաբերել գրադարանի պատասխանատուին:



Երեքշաբթի՝ 1 մարտի 2016 թականի կէսօրից անց ժամը 2:30-ին, այցելութիւն կազմակերպեց Սպահանի պետական համալսարանի Հայագիտական ամբիոն: Տիգրան Զարգարեանը նախ ծանօթութեան նպատակով այցելեց ամբիոնի գրադարան, այնուհետեւ հանդիպում ունեցաւ սոյն ամբիոնի դասախօսների հետ, որի ընթացքում տեղեկութիւններ փոխանցեց Հայաստանի Ազգային գրադարանի գործունէութեան, հնարաւորութիւնների, հեռակայ ծառայութիւնների եւ այլնի մասին, իսկ վերջում խօսակցութիւն ծաւալեց երկու գրադարանների փոխ-գործակցութեան ուղղութեամբ:



Չորեքշաբթի՝ 2 մարտի 2016 թականի առաւօտեան, յարգելի հիւրն այցելեց Հայոց ազգային կրթա-

համալիր, իսկ նոյն օրը երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» միութեան «Մ. Նալբանդեան» եւ Հայ Դատի կենտրոնատեղիի «Մ. Վարանդեան» գրադարաններ, որոնց ընթացքում ընդհանուր ծանօթութիւն ձեռք բերեց գրադարաններում առկայ հնարաւորութիւնների մասին, ապա զրոյց ունեցաւ գրադարանավարների ու պատասխանատուների հետ, որտեղ հիմնականում անդրադարձ ունեցաւ սոյն գրադարանների եւ Հայաստանի Ազգային գրադարանի միջեւ կապերի ստեղծման ու ընդլայնման եւ տեղեկութիւնների փոխանակման ուղղութեամբ:



Հայ Դատի կենտրոնատեղիում Տիգրան Զարգարեանը հանդիպեց Հայ Դատի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանի հետ:

Հինգշաբթի՝ 3 մարտի 2016 թականի առաւօտեան, Տիգրան Զարգարեանն այցելեց Ս. Բեթղեհէմ եկեղեցի եւ Նոր Զուղայի հայոց ազգային գերեզմանատուն: Նոյն օրը գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն Ազգային Առաջնորդարանում ընդունեց Ազգային Գրադարանի տնօրէնին:



Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթելով պրն. Զարգարեանին՝ իր ուրախութիւնը յայտնեց Ազգային Գրադարանի եւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Ս. Ներսէս Ընորհալի» գրադարանի միջեւ համագործակցութեան նոր փուլ սկսելու առթիւ: Ապա քննարկե-



ցին երկու կողմերի միջև համագործակցության եղանակներն ու կարելիությունները, նաև խորհրդակցություն տեղի ունեցավ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հնատիպ գրքերի և Ս. Ամենափրկչեան վանքի արխիվի թւայնացման աշխատանքների մասին:

Հինգշաբթի՝ մարտի 3-ի երեկոյեան, Հայոց ազգային կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում, Տիգրան Զարգարեան հանդիպեց կրթական և մշակութային ոլորտին առնչող անհատներին: Հանդիպմանը ներկայ էր նաև Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը:



Սկզբում Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու Վերգինէ Միրզախանեանը բացատրելով, որ 2016 թականին լրանում է «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակը, և նշելով, որ Ազգային գրադարանի տնօրէնի այցելութիւնը լրագրոյն սկիզբն է այս յրբեւեանական առիթին նկրած միջոցառումների, հրատարակեց Տիգրան Զարգարեանին արտայայտելու:



Պրն. Զարգարեանն իր բանախօսական ելոյթը ծաւալեց Ազգային գրադարանի գործունէութեան և սոյն հաստատութեան կայքէջի առցանց հնարաւորութիւնների շուրջ: Նա սկզբում շնորհակալական խօսք ուղղե-

լով Թեմական խորհրդին՝ իրեն հրաւիրելու և իր այցելութիւնը կազմակերպելու համար, դրատանքով արտայայտեց «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի գործունէութեան ծաւալի և պատկան գրադարանավարուհու կատարած ջերմեռանդ աշխատանքի կապակցութեամբ: Այնուհետև անդրադառնալով Ազգային գրադարանի պատմութեանը և գործունէութեանը, նշեց, որ Ազգային գրադարանը որպէս հայ գրքի պահոց խոշորագոյն հաստատութիւնն է աշխարհում: Տիգրան Զարգարեանն իր խօսքը շարունակեց ակնարկ ունենալով գրքերի և մամուլների թւայնացման անհրաժեշտութեանը և նշեց թւայնացած գրականութեան օգտագործման առաւելութիւններն ու թերութիւնները:

Նա իր ելոյթի երկրորդ բաժնում ներկաներին առցանց կերպով ծանօթացրեց Ազգային գրադարանի կայքէջին և թւայնացած գրքերի ու մամուլի շտեմարանից օգտուելու եղանակներին:

Հանդիպման ասարտին պրն. Զարգարեանը պատասխանեց հարցումներին:



Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնի Նոր Զուղա այցելութեան վերջին օրը՝ ուրբաթ՝ 4 մարտի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանում, հանդիպում կազմակերպեց համայնքիս գրադարանավարների հետ, որի ընթացքում Տիգրան Զարգարեանը ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց սոյն գրադարանի գործունէութեան վերաբերեալ. շարունակութեան մէջ արտայայտեցին համայնքիս գրադարանների պատասխանատուները՝ զեկոյց ներկայացնելով պատկան գրադարանների ծաւալած աշխատանքների կապակցութեամբ, այնուհետև տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն: Հանդիպման ասարտին Ազգային գրադարանի տնօրէնը խոստացաւ համապատասխան միջոցառմամբ նշել Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակը, որը լրանալու է 2016 թականին:

Այցելութիւնների շարանն ասարտեց յարգելի հիւրի Հայոց ազգային ծերանոց ժամանելով:

### ՓՈՒՐՆԲՈՒՄԱՆ ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՒ



թեան զարգացմամբ եւ տարածմամբ: Յուշագիրը նպաստելու է աշխարհով մէկ սփռած հայագիտական կենտրոնների հետ յարաբերութիւնների ամրապնդման, խորացման ու երկխօսութեան խթանմանը, կարելորելով փաստաթղթերի թւայնացումը, թւային գրադարանի ստեղծումը, հայ տպագիր ժառանգութեան արժեւորումը, թւայնացման միջոցով վտանգած նիւթերի երկարաժամկէտ պահպանումը, «Հայկականք» հայագիտական հանգույցի համապարփակ հայեցակարգի մշակումը եւ կենսագործման հարցերը:

Հինգշաբթի՝ 3 մարտ 2016 թականին, Հայաստանի ազգային գրադարանի տնօրէն պրն. Տիգրան Զարգարեանի Նոր Զուղա այցելութեան շրջագծում, համագործակցութեան յուշագիր կնքեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ Հայաստանի ազգային գրադարանի միջեւ, նկատի առնելով այն, որ թէ՛ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը եւ թէ՛ Հայաստանի ազգային գրադարանը ծառայում են հայագիտութեան պահպանման ու տարածման գաղափարներին, համամարդկային արժէքների տարածմամբ երիտասարդ սերունդ դաստիարակելուն, հայ պատանիներին հայոց լեզւի, հայ ժողովրդի պատմութեան, կրօնի եւ ինքնութեան հարցերին իրազեկելուն եւ հաշի առնելով այն, որ երկու կողմերը շահագրգիռ են հայագիտու-

Սոյն առիթով ներկայ էին Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, փոխատենապետ պրն. Վաչիկ Հայարապետեանը եւ ատենադպիր տկն. Քատուլին Դիլանշեանը: Կողմերը խոստացան համագործակցել փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտներում, որպէսզի հայագիտական հետազոտութիւնները հանրութեան առաւել լայն շերտերի համար մատչելի դառնան:



### ԴՈՎՏՈՐԱՅԻ ԵՒ ԳԵՐԼԻՍԱՆՍԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, իրանական 1393-1394 եւ 1394-1395 ուսումնական տարեշրջաններում Իրանի պետական համալսարաններում մուտք գործած գերլիսանսի եւ դոկտորայի մակարդակի 9 ուսանողների հետ հանդիպումը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ 2016 թականի մարտի 15-ին, ազգային առաջնորդարանում: Հանդիպմանը ներկայ էին Թեմիս թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, Թեմական խորհրդի անդամները եւ հրաւիրեալ ուսանողները:

*խորհուրդը, թէպէտ ուշացումով, այնուամենայնիւ կազմակերպեց դոկտորայի եւ գերլիսանսի մակարդակ նւաճած համայնքիս ուսանողների զնահատանքի այս հանդիպումը»:*



Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը ողջունելով ուսանողների ներկայութիւնը եւ շնորհաւորելով նրանց արձանագրած յաջողութիւնը, նշեց. «Ուսանողութիւնը միշտ եղել է Ազգային իշխանութեան ուշադրութեան կենտրոնում եւ հենց այդ իրողութեան յոյսի ներքոյ է, որ Թեմական

Շարունակութեան մէջ արտայայտեց Սրբազան հայրը: Թեմակալ առաջնորդն իր ուրախութիւնը յայտնելով ուսանողների ձեռք բերած յաջողութեան համար, յայտնեց. «Ուրախ եմ, որ բոլորդ Ձեր բարձրագոյն ուսումը շարունակում էք Իրանի պետական կարեւոր համալսարաններում: Այսօրեայ աշխարհը մասնագիտութեան աշխարհ է. ինչքան մասնագիտութիւն ձեռք բերէք Ձեր ընտրած ասպարէզում, այնքան կը յաջողէք Ձեր վաղեայ կեանքում: Ուսումը ինքնանպատակ





արարողութեամբ:

Արարողութեանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը, Ծափինշահիի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, թեմի քահանայից եւ դպրաց դասերը, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ ճարտարապետ Ասարգաղեգանն ու նրան ընկերակցող պատուիրակուիւնը, ազգային մարմինների անդամներ եւ համայնքի ժողովուրդ:



Սկզբում նախագահութեամբ թեմակալ առաջնորդի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի օրհնեց համալիրի տարածքի հողը, ապա Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնելով Պատգամաւորական ժողովին եւ անցեալ ու ներկայ Թեմական խորհուրդներին՝ աշխատանքը նախաձեռնելու, ինչու չէ նաեւ քաղաքա-

պետ Ասարգաղեգանին՝ համալիրի կառուցման արտօնութեան ստացման ուղղութեամբ ցուցաբերած համագործակցութեան համար, հայցեց առ բարձրեալն Աստուած, որ օրհնի մեր թեմի ժողովրդին ու իրանեան հայրեցիքը, եւ ուժ ու կորով պարգեւի աշխարհասփիւռ հայութեանը՝ միակամ կեցածքով իր յաղթական երթը շարունակելու համար:

Շարունակութեան մէջ պարսկերէնով արտայայտեց Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ով խորհրդի եւ հայ համայնքի անունից շնորհակալական խօսք ուղղեց քաղաքապետին՝ նախագծի իրականացման ուղղութեամբ իր ցուցաբերած համագործակցութեան համար, իսկ ճարտարապետ Ասարգաղեգանը նշելով, որ հայ համայնքի անդամներն Սպահան քաղաքի 5-րդ շրջանի ամենօրինակեւ լի քաղաքացիներն են, շնորհաւորեց աշխատանքի մեկնարկի առթիւ եւ յոյս յայտնեց, որ այն կաւարտուի ամենասեղմ ժամկէտում ու ամենատրակեալ ձեւով:

Այնուհետեւ շինարարական աշխատանքների խորհրդանշական մեկնարկը տրուեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր, քաղաքապետի, Թեմական խորհրդի ատենապետի եւ Պատգամաւորական ժողովի Դիւանի ատենապետ Վարուժ Մինասեանի միջոցով՝ բրիչի առաջին հարածներով:

Վերջում ներկաներն առիթ ունեցան ծանօթանալու կառուցելիք շինութեանը՝ ներկայացւած յատակագծի միջոցով, որի գծագրողն է ճարտարապետ Ռոբերտ Քեշիշեանը:



**ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՒՈՒՉԻ ԱՌԻԹՈՎ**



Նոռուզի առիթով շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով, երեքշաբթի՝ 2016 թականի մարտի 29-ի առաւօտեան գլխաւորութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանի, Պատգամաւորական ժողովի դիւանի եւ Թեմական խորհրդի ատենապետեր պրնք. Վարուժ Մինասեանից եւ Վրէժ Տէր-Մարտիրոսեանից բաղկացած պատուիրակուինն այցելեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէն հոգ. դկտ. Առզանին: Ներկայ էին նաեւ Գերմանիայի Համ-

բուրգ քաղաքում իսլամական կենտրոնի պատասխանատուներից դկտ. Իռանմանեշը եւ փոքրամասութիւնների հարցերով պատասխանատու պրն. Մազահեդին:



Յետմիջօրէին, Ազգային առաջնորդարանի նոյն պատուիրակութիւնը, որին ընկերակցեց նաեւ Կրօնական խորհրդի անդամ պրն. Սաքօ Տէր-Յովհաննիսեանը,



այցելեց Սպահան նահանգի նահանգապետ դկտ. Ռասուլ Ջաոգաուփուդին: Հանդիպմանը ներկայ էր քաղաքական, ապահովական եւ հասարակական հարցերով նահանգապետի տեղակալ պրն. Ռեզա Աղդային:



Յաջորդ օրը՝ չորեքշաբթի առաւօտեան, թեմակալ առաջնորդի գլխավորած ազգայինները, առաջնորդարանի դիւանապետ պրն. Արթին Մուրադեանի եւս ուղեկցութեամբ, այցելութիւն տւեցին Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ դկտ. Ջամալինեժադին: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սպահան քաղաքի հինգերորդ շրջանի քաղաքապետ ճրտ Ասատգաղեգանը: Հանդիպումների ընթացքում, թեմակալ առաջնորդ Արքազան Հայրը շնորհաւորանքներ եւ բարեմաղթութիւններ փոխանցեց պետական պատասխանատուներին՝ մաղթելով առողջութիւն եւ ծառայական բեղուն

գործունէութիւն: Նա շեշտեց բնութեան նորոգութեան հետ մարդու մտային-հոգեւոր վերանորոգութեան կարեւորութիւնը՝ ինչը իմաստաւորելու է նոր տարւայ ընթացքում մարդու կեանքը՝ աստուածամերձութեան եւ խաղաղութեան ճանապարհին: Առաջնորդ Արքազան Հայրն անդրադառնալով աշխարհում տիրող անարդարութիւններին եւ անմարդկային վերաբերմունքներին, դրանց պատճառը համարեց մարդու՝ Աստուծոց հեռանալն ու հոգեւոր առողջ կեանք չունենալը եւ յոյս յայտնեց, որ ապագայում մարդն անդրադառնալով իր կատարած սխալներին ու խոտոր արարքներին՝ փոխի իր ընթացքը եւ ստեղծի խաղաղ ու աստուածահաճոյ միջավայր ու աշխարհ՝ ինչիւն կոչւած է ինքը Աստուծու կողմից:



Պետական պատասխանատուներն եւս իրենց հերթին շնորհաւորելով նոր տարւայ առիթով, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին ազգային առաջնորդարանի պատիւրակութեանը եւ երկուստեք համագործակցութեան ու փոխ-յարաբերութեան համար զարգացում եւ առաւել ամրութիւն մաղթեցին:



**ՆՈՒՈՒՋԻ ԱՌԻՔՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԿՐԹԱ-ԴԱՍԽԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ**

Իրանական նոր տարւայ՝ Նոռուզի առիթով, կիրակի՝ 2016 թւականի ապրիլի 10-ի առաւօտեան, ազգային առաջնորդարանի պատիւրակութիւնը՝ գլխավորութեամբ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Ջաբեանի, այցելեց Սպահանի ընդհանուր եւ երրորդ շրջանի Կրթա-դաստիարակչութեան հիմնարկի պատասխանատուներին:



Պատիւրակութեանը մաս էին կազմում Թեմական խորհրդի ատենապետ եւ անդամ պրնցք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը եւ Վաչիկ Հայրապետեանը, Կրթական խորհրդի ատենապետ եւ անդամ տկնցք. Սաթո Աւետումեանը եւ Սոնիկ Բաղումեանը: Հանդիպմանը ներկայ էին Սպահանի Կրթա-դաստիարակչութեան գլխավոր տնօրէն պրն. Սոհամմադ Հասան Ղաէդիհան, հետազօտութիւնների եւ ծրագրատրման փոխտնօրէնը, միջնակարգ օղակի վարչութեան փոխտնօրէնը, հանրային կապի գրասենեակի պատասխանատուները, անվտանգութեան բաժնի տնօրէնը, մի խումբ փորձագէտներ եւ երրորդ շրջանի Կրթադաստիարակչութեան տնօրէն պրն. Դադիղը: Հանդիպման ընթացքում, թեմակալ առաջնորդ Արքազան Հայրը շնորհաւորանքներ եւ բարեմաղթութիւններ փոխանցելով պատասխանատուներին, միաժամանակ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների նկատմամբ նրանց ցուցաբերած համագործակցութեան եւ բարեացակամ

մօտեցումների համար:



Թեմակալ առաջնորդը նշելով, որ հալոց դպրոցներն արտակարգ եւ լուրջ դժարութիւններ չեն դիմագրաւում, վստահութիւն յայտնեց, որ առկայ ընթացիկ մանր հարցերի մասին եւս համաձայնութիւններ են գոյանալու խորհրդակցութեամբ:

Պրն. Վաչիկ Հայրապետեանը կարեւորութեամբ նշեց, որ հալոց դպրոցներն իբրեւ Իրանի հնագույն դպրոցներ, «Մնայուն դպրոցներ» ծրագրի մէջ ներառելու դէպքում անհրաժեշտ է հայկական կառուցների կանոնակարգին համապատասխան, յատուկ պայմաններ նկատի առնել, որի ուղղութեամբ պատասխանատուները դրական մօտեցում եւ պատրաստակամութիւն ցուցաբերեցին՝ խոստանալով տնօրինել պարտն ու պատշաճը:

Գլխաւոր տնօրէն պրն. Ղաէդիհան ուրախութիւն յայտնելով հանդիպման առթիւ, իր բարեմաղթութիւններն ու գոհունակութիւնը յայտնեց առկայ փոխ-յարաբերութեան եւ համագործակցութեան վերաբերեալ եւ վստահեցրեց, որ հալոց դպրոցներն ինչպէս միշտ, այսուհետեւ եւս յատուկ ուշադրութեան են արժանանալու:

Հանդիպման ասարտին, հալոց դպրոցներում առկայ խնդիրների մասին գրաւոր նամակ փոխանցեց ընդհանուր տնօրէին, ով խոստացաւ ժամ առաջ վերահասու լինել դրանց լուծմանը:



### ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ 5-ՐԴ ԾՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԵՏ

Երկուշաբթի՝ 2016 թականի ապրիլի 18-ին, իրանական Նոր տարւայ՝ «Նոուզ»-ի առթիւ, ազգային առաջնորդարանի պատիրակութիւնը գլխաւորութեամբ Սպահանի հալոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի այցելեց Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ ճրտ Ասաոզադեգանին: Պատիրակութեանը մաս էին կազմում Սպահանի հալոց թեմի Թեմակալ եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը եւ Վարուժ Մովսիսեանը, Թեմակալ խորհրդի անդամ պրն. Գառնիկ Բաղդասարեանը եւ ազգային առաջնորդարանի դիւանապետ պրն. Արթին Մուրադեանը:

մին, ովքեր իրենց նիւրական գործունէութեամբ բարձ մակարդակի ծառայութիւն են մատուցում շրջանի ժողովրդին: Պատիրակութիւնը յատուկ շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետ ճրտ Ասաոզադեգանին՝ առաջնորդարանի զանազան ծրագրերին ներկայութիւն ունեցալու համար:



Գերշ. Սրբազան Հայրը ազգային իշխանութեան եւ համայնքի անունից բարեմաղթութիւններ եւ շնորհաւորանքներ յայտնելով՝ շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետին եւ քաղաքապետարանի բոլոր անձնակազ-



Թեմակալ առաջնորդը վստահեցրեց որ առաջնորդարան-քաղաքապետարան յարաբերութիւնները ինչպէս միշտ շարունակելու են փոխադարձ յարգանքի եւ մտերմութեան մթնոլորտով:

Քաղաքապետն եւս իր հերթին շնորհաւորելով նոր տարին, իր գոհունակութիւնը յայտնեց հայ համայնքից եւ առաջնորդարանից՝ քաղաքապետարանին առնչող համագործակցութիւնների ընթացքում օրինաւոր եւ պատասխանատու կեցածքի համար:



**ՈՒՐՈՒԳՈՒԱՅԻ ՓՈՒՆԱԽԱԳԱՏԸ ԱՅՅԵԼԵՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԶԵԱՆ ՎԱՆՔ**

Կիրակի՝ 2016 թվականի ապրիլի 24-ի յետմիջօրէի ժամը 4:30-ին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեց Ուրուգւայի փոխ-նախագահ Ռաուլ Ֆեռնանդօ Սենդիկ Ռոդրիգեսը: Նրան ընկերակցում էր Իրանի Իսլամական Հանրապետութիւնում Ուրուգւայի լիազօր եւ արտակարգ դեսպանը:

գարանում, Հայոց ցեղասպանութեան տաղաւարի առջեւ առաջնորդ Սրբազան Հայրը 100-ամեակի խորհրդանիշ «Անմոռուկ»-ը փոխ-նախագահի կրծքից կախեց եւ հայ ժողովրդի անունից շնորհակալութիւն յայտնեց Ուրուգւայի պետութեանը, որ եղաւ աշխարհում առաջինը, ով 1965 թվականին՝ պաշտօնապէս ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:



Պատուիրակութեանը դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները:

Փոխ-նախագահին իր հետքին Ուրուգւայի դրօշ-կրծքանշան կախեց գերշ. Սրբազան Հօր կրծքին:

Փոխնախագահը ծաղկեմատոց կատարեց Ապրիլեան նահատակների յուշարձանի առջեւ եւ իր յարգանքի տուրքը մատուցեց անմեղ զոհերի յիշատակին: Նա անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութեանը եւ ոգեկոչեց Ապրիլ 24-ի 101-ամեակը:

Հանդիպման աւարտին, Թեմական խորհրդի կողմից յուշանւէր յանձնեց Ուրուգւայի փոխ-նախագահին:

Հիւրերն այցելեցին Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան: Թան-



**«ՆԱՄԱԿ ՍԱՏՄԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԶԻՆՒՈՐԻՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԵԱՐԱԴԻՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՅԹԻՆ ՄԱՆԱԿՅԱԾ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ**

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգեն արք. Չարեանի հովանաւորութեամբ եւ նախաձեռնութեամբ, Կրօնական խորհրդի կազմակերպութեամբ եւ Կրթական խորհրդի ու Նոր Զուղայի եւ Ծափինշահրի հայոց ազգ. դպրոցների պատասխանատուների համագործակցութեամբ, 2015 թականի դեկտեմբերի 14-ին կազմակերպւեց «Նամակ սահմանը պաշտպանող զինուորին» խորագրով շարադրութեան մրցույթ, որին իրենց մասնակցութիւնը բերեցին թեմիս աշակերտութիւնը:



Մրցույթին մասնակից դպրոցներն են եղել՝ Նոր Զուղայի «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրը, «Քանանեան» աղջկանց ու «Վատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցները, եւ Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» ուղեցույց դպրոցները:

Աշակերտների ստեղծագործութիւններն ստանալուն պէս, Թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր միջոցով ճանաչուած իրաւարար կազմը, որում ներառուած էին հայոց դպրոցներից եւ ազգային մարմիններից ներկայացուցիչներ, բժախնդրօրէն ընթերցեց բոլոր շարադրութիւնները եւ ընտրեց գերազանցներին ու լաւագոյններին: Բոլոր ընթերցումների ժամանակ իրաւարար կազմի կողքին է եղել Սրբազան Հայրը:



Սույն մրցույթի արդիւնքը յայտարարելու, մասնակիցներին քաջալերելու եւ յատկապէս հաջրեցիքը պաշտպանող սահմանապահ զինուորներին արժեւորելու եւ նրանց զոհողութեան ու նւիրումի առջեւ գլխի խոնարհելու նպատակով՝ թեմի Կրօնական խորհրդի հովանաւորութեամբ ու կազմակերպութեամբ եւ Կրթական խորհրդի համագործակցութեամբ, ուրբաթ՝ ապրիլի 29-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզասրահում տեղի ունեցաւ

գնահատանքի երեկոյ: Ծրագիրը յագեցած էր դպրոցների գեղարւեստական ելոյթներով եւ մրցանակաբաշխման արարողութեամբ:



Երեկոյի մեկնարկը տրեց Նոր Զուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի եւ Ծափինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաների, ինչու չէ նաեւ Նոր Զուղայի «Արմէն» ու Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցների երգչախմբերի սրահ մուտք գործելով, ովքեր իրենց ներկայութեամբ խանդավառութիւն պարգեւեցին հանդիսատեսին: Կրտսեր սաները կատարեցին միասնական շքերթ-տողանցք եւ թափահարեցին ձեռքում պահած փայտիկները, որոնց միացուած էին իրենց գեղեցիկ նկարչութիւնները՝ հայ զինուորի թեմայով: Շքերթի աւարտին մանուկները նկարչութիւնները տեղադրեցին նախատեսուած պատուհանի վրայ: Յաջորդիւ «Արմէն» դպրոցի երգչախումբը կատարեց «Զինուոր եմ ես փոքրիկ» եւ «Ասպետներ», իսկ «Սրբոց Վարդանանց» դպրոցի երգչախումբը՝ «Հօր հայրենիք» երգերը:

Ծրագրի շարունակութեան մէջ ողջոյնի խօսքով եւ երեկոյի մասին բացատրութեամբ հանդէս եկան հաղորդավարներ՝ Լեռնիկ Ծատուրեանն ու Մարտունի Խաչիկեանը, ապա Փաթիկ Ակոնի, Արինէ Իսաղուլեանի եւ Մարտունի Խաչիկեանի միջոցով ընթերցեցին երեք իրական նամակներ, որտեղ հանդիսատեսին խորապէս յուզեց հարազատների կողմից զինուորին եւ զինուորի միջոցով իր մօրը գրուած



Նամակների իւրաքանչիւր նախադասութիւնը: Նամակների ընթերցողներին կիթառի նագակցութեամբ ընկերակցում էր Գէորգ Մովսիսեանը:



Ընթացքում «Տունն իմ հայրենի» երգը մենակատարեց Վանանդ Իսաղովեանը:

Այնուհետեւ հերթն հասաւ «Քանանեան» դպրոցին: Սկզբում պարային շարժումներով ներկայացան մի խումբ աղջիկներ, ապա խմբական կատարմամբ հնչեցին «Ազգ իմ փառապանծ» եւ «Ո՛չ, չեն մեռնում հերոսները» երգերը: Իսկ ասմունքեցին Նարէ Վարդանեանը «Յարգանք ձեզ» եւ Վանէ Յարութիւնեանը «Ո՛չ, մի՛ նահանջէք» բանաստեղծութիւնները:

Սրբազան Հայրն իր հայրական պատգամն ուղղելով ներկաներին, իր գնահատանքի խօսքն ասաց ծրագրի կազմակերպման գործում համգործակցութիւն ցուցաբերած ազգային մարմիններին ու դպրոցների պատասխանատուներին: Նա դրատանքի խօսք ուղղեց յատկապէս Իրանի Իսլամական Հանրապետութեան զինած ուժերում ծառայող հայ զինուորներին, հանգստի կոչւած դերգորավար Արտիկ Մելիքեանին, Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի հայ նահատակների ընտանիքներին, գերիներին ու անձնուրացներին եւ Արցախի բանակում ծառայող մեր թեմի զաւակներից մէկին ու սրահում ներկայ նրա ծնողներին: Սրբազան Հօր կողմից արտասանւած բոլոր գնահատանքի խօսքերն առանձնաբար հաստատուեցին ներկաների բուն ծափողջոյններով:



Թեմակալ առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ հայ զինուորը հայրենասիրութեան, բարոյականութեան, նիւրումի եւ զոհողութեան խորհրդանշէ է ու գլուխ խոնարհելով զոհած հերոս նահատակների յիշատակի եւ կենդանի հերոսների սխրանքների առջեւ, ակեացրեց, որ հայ ազգը Խաչեալին հաւատացող ժողովուրդ է եւ Խաչեալի նման ամէն օր խաչում է ու իր արիւնն է թափում՝ իր արդար եւ անժամանցելի իրաւունքների համար: Նա ընդգծելով, որ Արցախը մեր սուրբ հայրենիքն է, ասաց՝ թշնամին չի կարող հայ ազգին ծունկի բերել, քանի որ մեր հերոսներն ու ողջ ժողովուրդը «Մահ իմացեալ՝ անմահութիւն է» նշանաբանի կամբով ու ոգով շարունակում են իրենց պայքարը:



Այնուհետեւ իրականացւեց մրցանակաբաշխման բաժինը, որտեղ իւրաքանչիւր օղակի մրցոյթի «Լա» անանակարգին արժանացած աշակերտները Սրբազան Հօրից ստացան գնահատագրեր, իսկ «Գերազանց»-ները՝ այս առիթով պատրաստւած յատուկ շքանշանները: Յատկանշական է, որ լաւ եւ գերազանց գրութիւնների ընտրութեան համար՝ իրաւարար կազմը շարադրական եւ լեզուական մակարդակին զուգահեռ, յատկապէս ուշադրութիւն էր դարձրել սահմանապահ զինուորի նկատմամբ արտայայտուած իրական եւ անմիջական մտածումներին ու զգացումներին եւ արտացոլած գաղափարների կարեւորութեանն ու հետաքրքրութեանը:

Մրցանակակիրների անունները յայտարարեցին իրաւարար կազմի ուսուցչուհի անդամների միջոցով: Տարրական բաժնինը ընթերցեցին Մատիթա Քեշիշեանն ու Ժանետ Բաղումեանը, ուղեցոյցինը՝ Սեդա Դիլանչեանը եւ Սօսէ Պօղոսեանը, իսկ միջնակարգինը Ռիմա Սիմոնեանը՝ ընկերակցութեամբ Ծահինշահի



հայ համայնքի հոգևոր տեսուչ հոգՉ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի: Իւրաքանչիւր բաժնի յաղթողների թային պատկերն էր՝ տարրական 18 լաւ եւ 31 գերազանց, ուղեցոյց՝ 11 լաւ եւ 8 գերազանց, իսկ միջնակարգ՝ 5 լաւ եւ 6 գերազանց: Հարկ է նշել, որ ընթացքում մի այլ դասատուութեամբ դպրոցների Ծնողական խորհուրդների միջոցով մրցոյթին մասնակից բոլոր աշակերտներին Սրբազան Հօր կողմից տրեւցին գնահատագրեր՝ մասնակցութեան համար:



Շարունակութեան մէջ Սրբազան Հօր, Հայր Սուրբի, Պատգամատրական Ժողովի Դիւանի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետներ Վարուժ Մինասեանի, Վրէժ Տէր-Մարտիրոսեանի ու Վարուժ Մովսիսեանի եւ դերձօրավար Արտիկ Մելիքեանի միջոցով նւերներ յանձնեցին Իրանի զինւած ուժերում ծառայող թեմի զաւակներին, իսկ զինծառայողի բացակայութեան պարագային՝ նրանց ծնողներին:

Մրցանակաբաշխութեան բաժնին յաջորդեց գեղարեստական ներկայացումների երկրորդ հանգրւանը՝ «Վատարինեան» տղայոց դպրոցի աշակերտութեան կատարումներով: Նախ երգչախումբը հանդէս եկաւ «Ջան Հայաստան» եւ «Ախալքս ու ես» երգերով, ապա տղաների միջոցով իրականացեց զինուորական վարժութիւններից կազմւած մի ներկայացում, որն ասարտեց ՀՀ եռագոյն դրօշի ծածանմամբ՝ ի նշան հայ ազգի գոյատեւման ու յաղթանակի:





**ԱՒԱԳ ԵԱԲԱԹԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ**

**ԾԱՂԿԱԶԱՐԳ ԵՒ ԳՈՒՆԲԱՅԷՔ**

Կիրակի՝ մարտի 20-ի առաւօտեան ժամը 10:30-ին, ծխատէր քահանայ հայրերի միջոցով, Ս. Եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննու, Ս. Աստուածածին եւ Ս. Մինաս եկեղեցիներում, ուր հանդիսութեամբ նշեց Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ կատարած յաղթական մուտքի յիշատակը՝ Ծաղկազարդ տօնը:



Հոգեպարար արարողութիւններն աւարտուեցին շարականի երգեցողութեամբ եկեղեցու շրջափակում իրականացած մանուկների թափօրով, որին մասնակից դարձան նաեւ ներկայ ժողովուրդը:

Ս. պատարագից առաջ, բոլոր եկեղեցիներում օրհնուեցին տիկնանց յանձնախմբերի միջոցով պատրաստած ուռնու եւ ձիթեղու ճիւղերը, որոնք արարողութիւնից յետոյ բաժանուեցին ներկայների:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5:00-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Աստուածածին, Ս. Յովհաննու եւ Ս. Մինաս եկեղեցիներում տեղի ունեցաւ Դոնբասցէքի արարողութիւնը:

Սպահանքի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախագահեց եւ կատարեց Ս. Յովհաննու եկեղեցու կարգը: Ընթացքում շարականների երգեցողութեամբ հանդէս եկաւ «Շուշանիկ» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Անուշ Յովհաննիսեանի:



Աւետարանական ընթերցումներով ու շարականների երգեցողութեամբ ողողած հոգեպարար արարողու-

թեան աւարտին բացեց Մեծ պահքի ընթացքում փակ մնացած վարագոյրը, խորհրդանշելով, որ ապաշխարութեամբ բացուելու են երկնքի արքայութեան դռները:



Այնուհետեւ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը իր հայրական պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներին: Նա անդրադառնալով Ծաղկազարդ տօնին եւ օրայ խորհրդին՝ ասաց. «*Քառանօրեայ պահեցողութեան չըջանն իր աւարտին հասաւ եւ մեր դիմաց բացուում է Աւագ շաբաթը, որն սկսւում է Քրիստոսի Երուսաղէմ կատարած յաղթական մուտքով: Մենք պատրաստ ենք Քրիստոսի հետ քայլելու, մասնակից դառնալու նրա չարչարանքներին ու խաչելութեանը եւ այս անգամ Քրիստոսի թաղման հետ զերեզմանելու մեր մեղքերն ու նրա հետ նոր կեանքով յարուլթիւն առնելու, որը յաւիտենական է եւ այս աշխարհից չէ*»: Վերջում Սրբազան Հայրը ներկայներին յորդորեց, որ բաց անեն իրենց սրտերն ու հոգիները եւ Քրիստոսի խաչն իրենց ուսերին վերցնելով, քայլեն նրա հետ լոյսի ճանապարհով՝ յաւիտենական ու մշտնջենական լոյսին՝ Աստուծոյ հասնելու համար:

**ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ**

Մարտի 22-ի երեկոյեան ժամը 5-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Աստուածածին, Ս. Մինաս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում ժամերգութիւն տեղի ունեցաւ՝ Տասը կոյսերի յիշատակի օրայ առթիւ:



Սպահանքի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն



արք. Չարեանը նախագահեց Ս. Մինաս եկեղեցում մատուցող արարողութեանը, որտեղ իրականացեց Տասը կոյսերի խորհուրդը նշող յատուկ կարգը՝ Նոյ նահապետի ու Ջրհեղեղի աստուածաշնչական դրագների, ինչու չէ նաեւ աստուածապաշտութեան ճանապարհին իմաստութեան կարելորութիւնը շեշտող սուրբ-գրային հատածների եւ Տասը կոյսերի առակի անտարանական բաժնի ընթերցմամբ:

Վերջին ընթերցման ժամանակ տասը կոյսերի տիպարով արարողութեանը մասնակցեցին տասը օրհորդներ, որոնք իրենց ձեռքում ունէին կոյսերի լապտերները խորհրդանշող մոմեր: Առակի պատկերաւորումը լրացաւ, երբ փակ թղթերը բաժանեցին նշած երիտասարդուհիներին եւ նրանցից հինգը մարեցին իրենց մոմերը:



Արարողութեան ասարտին թեմակալ առաջնորդն իր պատգամը տուեց ներկաներին, որտեղ գնահատեց տասը կոյսերի կերպարները մարմնաւորած օրհորդներին, ապա անդրադառնալով առակի խորհրդին, թելադրեց՝ միշտ պատրաստ ու զգօս լինել Տիրոջ գալստեան նկատմամբ, ապրել աստուածահաճոյ եւ քրիստոնէավայել կեանքով՝ հաշտութեան օրը բաց ճակատով ներկայանալու եւ երկնքի արքայութեանն արժանանալու համար: Այնուհետեւ առաջնորդ Սրբազան Հայրը դիմելով տասը երիտասարդուհիներին մաղթեց նրանց, որ առատօրէն ստանան Աստծու օրհնութիւնը, Աստծու շնորհքով հասակ առնեն եւ իրենց մէջ կերտուի քրիստոնէավայել ու հայաՎայել նկարագիրը՝ Յիսուս Քրիստոսի հաւատարիմ զինուորները դառնալու համար:

**Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՀԱՍՏԱՄԱՆ ՅԻՇԱՏԱԿ**

Հինգշաբթի՝ 2016 թականի մարտի 24-ի առաւօտեան, Աւագ հինգշաբթի օրան յատուկ Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եւ Ս. Մինաս եկեղեցիներում՝ ի յիշատակ «Վերջին Ընթրիք»-ի պահին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով Իր մարմինն ու արիւնը խորհրդանշող Ս. Հաղորդութեան խորհրդի հաստատման:

Ս. Ստեփանոս եկեղեցում պատարագեց արժն. Տ. Մեսրոպ առ. քինյ. Գալստանեանը: Ընթացքում, քարոզի պահին, Ս. Հաղորդութեան խորհրդի կարելորութեան եւ նշանակութեան վերաբերեալ Ս. Բարսեղ Հայ-

րապետի ճառն ընթերցեց արժն. Տ. Խաչատուր քինյ. Չարգարեանի միջոցով: Եկեղեցում արարողութեանը մասնակցելու եւ օրապ խորհրդին հաղորդ դառնալու համար ներկայ էին նաեւ Նոր Ջուղայի Հայոց ազգային «Արմէն» տարրական երկսեռ դպրոցի աշակերտութիւնը՝ իրենց պատասխանատուների հետ:



Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը ներկայ գտնելով Ս. Մինաս եկեղեցում, նախագահեց արարողութիւնը եւ օրան պատշաճ իր քարոզը փոխանցեց ներկայ հաւատացեալներին, որոնց շարքում ներկայացել էին նաեւ Նոր Ջուղայի Հայոց ազգային «Քանանեան» աղջկանց դպրոցի աշակերտուհիները՝ իրենց պատասխանատուների հետ:



Գերշ. Սրբազան Հայրը բնաբան ունենալով Ս. Պատարագի երգեցողութեանը մաս կազմող «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք» կոչը՝ կենտրոնացաւ երկիւղածութեան, հաւատքի եւ սրբութեան վրայ՝ շեշտելով նրանց կարելորութիւնը՝ արժանատրապէս Ս. Հաղորդութիւն ստանալու համար իբրեւ փրկութեան միջոց, եւ անդրադառնալով Ս. Բարսեղ հայրապետի ճառին՝ յիշեցրեց, որ սոսկ հացի եւ գինու պէս չպէտք է վերաբերել Ս. Հաղորդութեանը, որը ճշմարտապէս մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնն են խորհրդանշում: Թեմակալ առաջնորդը խօսքն ուղղելով ներկայ աշակերտութեանը՝ յորդորեց



նրանց անարատ եւ սրբութեամբ առլեցուն կեանք ապրեն եւ իրենց հաւատքը գիտակցաբար կերպով կեանքի եւ գործի վերածեն:

Երկու եկեղեցիներում մատուցող Ս. Պատարագի աւարտին, Մեծ Պահոց ապաշխարութեան ժամանակաշրջանի դադարից յետոյ, առաջին անգամ ներկաները Ս. Հաղորդութիւն ստացան:

**ԿԱՐԳ ՈՏԵԱԼԻԱՅԻ**

Մարտի 24-ին, Աւագ հինգշաբթի երեկոյեան ժամը 5-ին, Նոր Զուղայի Ս. Մինաս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Ստեփանոս եւ Ս. Յովհաննոս եկեղեցիներում մատուցեց խոնարհութեան, ծառայութեան, նիրումի ու զոհողութեան խորհրդանիշ եկեղեցական կարգը՝ Ոսնալայի արարողութիւնը:



Անսալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հռչակագրին՝ 2016 թականը «Ծառայութեան տարի» հռչակելու կապակցութեամբ, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը թեմի Կրօնական խորհրդի հետ համախորհուրդ որոշեց Ոսնալայի արարողութեան ընթացքում լւացնեն թեմի ազգային մարմիններում եւ միութիւններում երկար տարիներ ծառայած անհատների ուղերթը: Կատարած դասաւորութեան համաձայն Ս. Յովհաննոս եկեղեցում արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկերեանը լւաց թեմի Պատգամաւորական Ժողովի, Ս. Մինաս եկեղեցում արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը՝ Թեմական խորհրդի ու պատկան ենթամարմինների եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում արժն. Տ. Խաչատուր քինյ. Չարգարեանը՝ Կրօնական խորհրդի ու պատկան ենթամարմինների ներկայ եւ անցեալ անդամների ուղերթը:



Ս. Ստեփանոս եկեղեցում մատուցող ժամերգութեանը նախագահեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը եւ իր ձեռամբ լւաց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» եւ Փերիոյ կրթասիրաց միութիւնների ու Հայ ուս. «Ձեռքամախալ» միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի ներկայացուցիչների ուղերթը: Սոյն եկեղեցում, արարողութեանը մասնակցեց նաեւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քինյ. Գալստանեանը:

Սրբազան Հայրն արարողութեան ընթացքում օրւան պատշաճ իր քարոզը տուց ներկայ ժողովրդին, ուր անդրադառնալով Ոսնալայի իրադարձութեանն ու խորհրդին, կարեւորութեամբ ընդգծեց, որ Քրիստոսը որպէս մեծագոյն յեղափոխական՝ աշխարհ եկաւ յեղաշրջելու մարդկանց մտքերն ու հոգիները եւ պատգամելու, թէ իսկական մեծութիւնը՝ խոնարհութեան, ծառայութեան եւ սիրոյ մէջ է: Նա իր պատգամի շարունակութեան մէջ անդրադարձաւ նաեւ Ծառայութեան տարւան եւ ասաց, եթէ ապրենք Քրիստոսի օրինակով՝ հաւատքով, սիրով ու խոնարհութեամբ լեցուն, Աստուած մեզ կը գնահատի ու կը վարձատրի եւ մենք որպէս ազգ, հայրենիք ու եկեղեցի կը գոյատեւենք եւ կը շարունակենք մեր յաղթական երթը:

**ԽԱՒԱՐՄԱՆ ՀՍԿՈՒՄԻ ԿԱՐԳ**

Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի, կեանքի վերջին պահերն ու դէպքերն իր մէջ ամփոփած Աւագ հինգշաբթին, իր աւարտին հասաւ՝ Խաւարման հսկումի խորհրդաւոր արարողութեամբ: Մարտի 24-ի երեկոյեան ժամը 7:30-ից, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Մինաս, Ս. Յովհաննոս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներում սկիզբ առաւ Խաւարման կարգը՝ լեցուն հոգեթով շարականներով, երգերով ու աւետարանական ընթերցումներով:



Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու արարողութեանը: Սրբազան Հայրը մթութեան ու լուծութեան մէջ իր հայրական պատգամն ուղղեց ներկայ հաւատացեալներին, որտեղ բնաբան ունենալով «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում» աւետարանական հատուածը, անդրադարձաւ Քրիստոսի մատնութեանը՝ Յուդայի միջոցով եւ կրած չարչարանքներին: Թեմակալ առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով օրւայ պատգամը՝ ներո-



ղամտությունը, եւ կարեւորութեամբ նշելով այն փաստը, որ Քրիստոսը նեղութեան ու տառապանքի պահին՝ խաչի վրայից, իրեն չարչարողների համար ներողամտութիւն հայցեց Աստծուց, անդրադարձաւ նաեւ այսօրուայ աշխարհին, որտեղ ներելու փոխարէն մարդիկ աւելի անհանդուրժող են դարձել միմեանց նկատմամբ ու թելադրեց՝ ձգտել երկնքի արքայութեան մէջ բաժին ունենալուն՝ ներողամտութեամբ, խոնարհութեամբ, սիրով եւ հանդուրժողականութեամբ:



Սոյն արարողութեան ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամուհիները:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ, ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱՂՄԱՆ ՅԻՇԱՏԱԿ**

Ասագ ուրբաթ օրը՝ 2016 թականի մարտի 25-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Նոր Զուղայի Ս. Յովհաննու եկեղեցում մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Թաղման կարգը կատարեց: Արարողութիւնը նախագահեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը: Ներկայ էին հոգեւորականաց եւ դպրաց դասերը, եւ մասնակցել էին բազմաթիւ հաւատացեալներ: Արարողութեան երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ արն. Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ:



Ս. Խորանի առջեւում Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող ծաղիկներով զարդարած սեղանի առջեւ հոգեւոր հայրերի, դպրաց դասի եւ երգչախմբի միջոցով Երեկոյեան արարողութիւն կատարեց, ընթերց-

ւեցին մեսիական չարչարանքներն ու զոհագործութիւնը ներկայացնող ասուածաշնչական հատուածներ: Հոգեւորականաց դասը խորհրդանշական գերեզմանի առջեւ ծնկի իջած երգեց «Սուրբ Աստուած»:



Արարողութեան ընթացքում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, բնաբան ունենալով արարողութեան ընթացքում հինչւած շարականի բառերը՝ «Կենդանին յաւիտենից Քրիստոս այօր խնդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ. եւ մերկութեան ծածկոյթն Աղամայ յանձն առնու պատի ի Յովսէփայ», իր պատգամը փոխանցեց հաւատացեալ ներկաներին, շեշտելով, որ մարդկութիւնը միայն Քրիստոսի Խաչելութեամբ եւ Թաղմամբ, որին յաջորդեց հրաշափառ Յարութիւնը, կարողացաւ փրկութեան յոյսն ունենալ եւ դէպի Երկնքի արքայութիւն տանող ճանապարհը գտնել: Գերշ. Սրբազան Հայրը իր խօսքում անդրադարձաւ, որ Քրիստոս խաչի վրայ իր արիւնը թափեց՝ իբրեւ փրկագին՝ մարդու մեղքերի թողութեան դիմաց, եւ Նոր ուխտի նշան՝ մեղաւոր մարդուն Աստծու հետ հաշտեցնելու:

Արարողութեան վերջի բաժինն էր «Խաչի Քո Քրիստոս...» հոգեգմայլ շարականի երգեցողութիւնը ծնկաչօք հոգեւորականաց եւ դպրաց դասերի միջոցով:



Արարողութիւնից յետոյ, խորհրդանշական գերեզմանի վրայ դրած ծաղիկները բաժանեցին հաւատացեալ ներկաներին, որն իբրեւ Քրիստոսի մեզ շնորհած նոր կեանքի անուշ բոյր եւ գեղեցկութիւն զարդարելու է հաւատացեալների բնակարանները:



**Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԶԱՏԿԻ ԶՐԱԳԱԼՈՅՅԻՆ ԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ**

Ս. Զատկի Ծրագալույցին, շաբաթ՝ մարտի 26-ի երեկոյան ժամը 6-ից, նախագահությամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբէն արք. Զարեանի եւ ձեռամբ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի, Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Ներսէս եկեղեցում:



Ընթացքում գերշ. Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքն ուղղեց թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերին, ինչու չէ նաեւ Նոր Զուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեանը, երգեցիկ խմբերին, երէցսփոխերին, եկեղեցիների Կանանց յանձնախմբերին ու հաւատացեալ ժողովրդին՝ Մեծ պահեցողութեան եւ Աւագ շաբաթուայ ընթացքում եկեղեցիները պայծառ պահելու համար, ապա ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը՝ Ս. Յարութեան տօնի առթիւ:




Ահա մի հատուածի մէջբերում Վեհափառ Հայրապետի պատգամից.-

*«Սիրելի՛ հայորդիներ, յաւիտենական կեանքի յաղթանակով օծուն այս օրերուն, եկէք դառնանք յարուցեալ Քրիստոսի: Յիշենք Քրիստոսի հետ անմիջական հաղորդութեան մէջ ապրած ու անոր կենսաւորիչ ներկայութեամբը վերանորոգուած սրբազան առաքելներուն վկայութիւնը թէ՛ Աստուած «մեզ վերստին կեանքի կոչեց Քրիստոսով» (Եփ 2.5) եւ հետեւաբար, մեզի համար «կեանքը Քրիստոս է» (Փյա 1.21):*

*Քրիստոս իր խաչի գօրութեամբ ու յարութեան յաղթանակով խորտակեց մահուան դուռը ու մեր առջեւ բացաւ ճշմարիտ կեանքի*

*դուռը: Ա՛յս է Աւետարանին պատգամը: Ա՛յս է քրիստոնէական հաւատքին էութիւնը»:*



Վերջում ներկաները հաղորդութիւն ստացան, ապա ստանալով Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան անտիսը, իրենց հետ տուն տարան արարողութիւնից ստացած օրհնութիւնը:

Նոյն առիթով Ս. Պատարագ մատուցեց նաեւ Ս. Ստեփանոս, Ս. Նիկողայոս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում:

Յաջորդ օրը, կիրակի՝ մարտի 27-ի առաւօտեան, Փրկչի յաղթական յարութեան տօնի՝ Ս. Զատկի առթիւ, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Յովհաննոս եկեղեցում՝ ձեռամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարբէն արք. Զարեանի:

Յընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրն իր պատգամն ուղղեց հոծ բազմութեանը, որստեղ բացատրելով «ո՞վ է մեղաւորը» եւ «ի՞նչ է մեղքը», կարեւորութեամբ ընդգծեց, որ Աստուած ոչ միայն չլքեց մարդուն, այլեւ նրան սիրելով իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց՝ մարդկանց մեղքն իր վրայ վերցնելով՝ մաքրելու եւ սրբելու նրանց: Թեմակալ առաջնորդն իր պատգամի շարունակութեան մէջ ամփոփ անդրադարձ ունենալով Քրիստոսի կեանքին, նրա ուսուցումներին՝ մարդ արարծին մեղքից հեռացնելու եւ դէպի Աստուած վերադարձնելու ուղղութեամբ ու յատկապէս հրաշափառ յարութեանը՝ նշեց. «Հայ ժողովուրդն իր ողջ պատմութեան ընթացքում հաւատաց յարութեանը եւ դարձաւ ճշմարիտ հետեւորդը Յարուցեալի: Հաւատաց «Թափուր գերեզման»-ի իրականութեա-



նը՝ նայելով միշտ վաղևան, գալիքին, Մեծ Արշալույսին՝ Երբէք չտկարացաւ, չյուսահատուեց, չընկճուեց, որովհետեւ «Խաչն էր վերցրել իր ուսերի վրայ» եւ դարձել ճշմարիտ հետեւորդը Աստուածորդու, հաստատելով իր հաւատը, թէ մեղքը չի յաղթել, յաղթողը Քրիստոսն է, մահը չի յաղթել, յաղթողը Քրիստոսն է, որը յաւերժօրէն ապրելու ու գոյատեւելու խորհուրդն ու յոյսը տւեց նրան»:



Արարողութեան աւարտին ներկայ հաւատացեալները գերշ. Սրբազան Հօր ձեռամբ Ս. Հաղորդութիւն ստացան: Գերշ. Սրբազան Հօր նախագահութեամբ իրականացած վերոնշեալ զոյգ արարողութիւնների երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենա-

փրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով:

Ս. Յարութեան տօնի առթիւ պատարագ մատուցեց նաեւ Նոր Զուղայի Ս. Մինաս, Ս. Ստեփանոս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներում, ուր պատարագիչ հայրերի միջոցով ընթերցեց առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:



Կիրակի երեկոյեան ժամը 6-ից, գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում ընդունեց ազգայինների եւ համայնքի անդամների շնորհաւորանքները՝ Զատկական տօնի առթիւ:



**ՀՈԳԵՏԱՆԳԱՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՓԵՐԻԱ ԳԱԻԱՌԻ «ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍ» ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ**

Հինգշաբթի՝ մարտի 31-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի նախագահութեամբ, Փերիա գաւառի Ներքեի Խոյզան գիւղի մօտակայքում, բլրի վրայ գտնուող «Լուսահանգիստ» սրբավայրում, որտեղ հաւատի համար նահատակած Գրիգոր անունով մի հաւատացեալ քրիստոնեայի շիրմի վրայ կառուցած է փոքրիկ մատուռ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Ամենամեայ կարգով իրականացուող այս պաշտօնը, աւանդոյթի համաձայն, տեղի է ունենում Ս. Յարութեան տօնին յաջորդող առաջին կիրակի օրը՝ Կրկնազատկին, սակայն վայրի հեռաւորութեան եւ ուխտաւորների յարմարութիւնը նկատի առնելով, վերջին տարիներին, արարողութիւնը իրականացուած է Կրկնազատկին նախորդող արձակ օրը:

Սոյն հոգեհանգստեան պաշտօնին մասնակցում էին նաեւ արժն. Տ. Խաչատուր քինյ. Զարգարեանը, արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը, թեմի դպրաց դասի եւ ազգային մարմինների ներկայացուցիչներ ու հոծ թւով ուխտաւոր ժողովուրդ:





Կրօնական արարողութիւնից յետոյ թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը ներկաներին ուղղած իր պատգամում, անդրադառնալով Քրիստոսի հրաշափառ յարութեանը եւ այն փաստին, որ հայ ժողովուրդն աշխարհում առաջին ազգը եղաւ, ով պետականօրէն ընդունեց քրիստոնէութիւնը, ասաց, թէ հայ ազգը պատմութեան ընթացքում տառապալից օրեր է ունեցել, սակայն երբեք չի տկարացել եւ չի յուսահատել, այլ նայելով յարուցեալ Փրկչին ու նրա վերածնունդին, վերանորոգել է իր կեանքը, ապրել յաղթականօրէն՝ իր կեանքում նոր արշալոյս բացելով:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը կարեւորութեամբ նշելով, որ բոլոր սրբերը հետեւել են Քրիստոսի ճշմարիտ օրինակին եւ յանուն հաւատի, հայրենիքի ու սկզբունքների նոյնիսկ ընծայաբերել են իրենց կեանքը, յիշեց յատկապէս «Լուսահանգիստ» սրբավայրում գերեզմանաձ գրիգոր սրբին, ապա գնահատելով հոծ թւով ուխտաւորների ներկայութիւնը այս

արարողութեանը, հայցեց Աստծուն, որ հայ ժողովրդի ճանապարհը բացի դէպի յաւիտենականութիւն, անմահութիւն եւ յաւիտենական ուրախութիւն:



Արարողութիւնից յետոյ, ուխտաւորները մտնելով վանքի եւ խունկ ծխեցին նահատակ Գրիգորի գերեզմանի վրայ, այնուհետեւ գարնանային պայծառ ու հաճելի օրայ մնացած բաժինն անցկացրին բնութեան գրկում:

**ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ ԱՐՅԱՄԵԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԶՈՎԱԾՆԵՐԻ ՅԻՆԱՏԱԿԻՆ**

Կիրակի՝ 2016 թականի ապրիլի 3-ի առաւօտեան, Կրկնազատկին, Սպահանի հայոց թեմի եկեղեցիներում սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց: Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում տեղի ունեցող արարողութեանը նախագահեց Սպահանի հայոց թեմի Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը:

Յընթացս Ս. Պատարագի յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա իր խօսքում նշեց, որ տակաւին զատկական մթնոլորտի մէջ ենք եւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան ներշնչանքով ողողւած է մեր աւօրեան, նաեւ անդրադարձաւ արցախեան դէպքերին եւ խստիւ դատապարտեց նախայարձակ թշնամուն, ով իր անպատասխանատու կեցածքով տօնական այս օրերին դառնաղի կացութեան է մատնել մեր հայրենակիցներին:

Գերշ. Սրբազան Հայրն աղօթեց դարաբաղա-ադրբեջանական ընդհարումների ընթացքում հայրենի հողի պաշտպանութեան համար իրենց կեանքը զոհած հայ քաջարի զինուորների նաեւ անմեղ ընկած խաղաղ բնակիչների հոգիների խաղաղութեան համար, նրանց հարազատներին Սուրբ Հոգու մխիթարութիւն խնդրեց եւ Հայոց բանակին ուժ ու կորով՝ դիմադրելու չարամէտ ոտխին:

**ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՂ-ՆԱՄԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ**

Նոր Զուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի կազմակերպութեամբ, սրբութեան ու զոհողութեան խորհրդանշիչ հայ մայրերի տօնը նշեց գեղարուեստական-դասախօսական ձեռնարկով, չորեքշաբթի՝ ապրիլի 6-ի երեկոյեան, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում: Երեկոյի պատուաւոր հիւրերն էին դպրոցի աշակերտութեան մայրերն ու տատիկները:

Ծրագրի բացման խօսքն ասաց դպրոցի ուսուցչուհի Անետ Ղազարեանը, ով ելոյթ ունեցաւ շնորհաւորանքներով ու մեծարանքի արտայայտութիւններով: Ահա մի հատուածի մէջբերում բացման խօսքից.

*«Հայ մայրը յաւերժացել է իր արդար էութիւնը թէ աշխարհիկ կեանքում եւ թէ դրախտում, որովհետեւ նա ընդունակ է ոչ միայն գոհելու իրեն յանուն իր գաւակի, այլ նաեւ գոհաբերելու իր որդուն ամենաանհեղ ճակատամարտերում: Այսօր խիստ արդիական*

*են եւ նշելի դարաբաղեան ճակատամարտում իրենց կեանքը նւիրաբերած բազմաթիւ հերոսները, որոնց շիրիմները պատած են մայրական հզօր սիրով»:*



Բացման խօսքին յաջորդեց գեղարուեստական բաժինը, ուր նախակրթարանի աշակերտներն ու մանկապարտէզի Դեղին եւ Մանուշակագոյն խմբակների սաները միասնաբար իրենց տատիկներին ու մայրերին նւիրեցին խմբական երգերից եւ արտասանութիւններից կազմած մի գեղեցիկ փունջ՝ դուատանքի խօսքերով ու մօր նկատմամբ ունեցած զաւակի անկեղծ ու պարզ սիրոյ արտայայտութիւններով ողողւած:



Բանախօսական ելոյթով հանդէս եկաւ հայոց ազգային դպրոցների վաստակաւոր ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ով իր խօսքի առաջին բաժնում անդրադառնալով նախաքրիստոնէական շրջանում հայ կնոջ կարեւոր դերակատարութեանը՝ ժողովրդի մէջ՝ քրիստոնէական գաղափարները գաղտնի տարածելու գործում, ընդգծեց, որ հայ կինը ինչքան ամուր կառչած լինի իր հաւատին, այնքան ամրակուռ են լինե-

լու նրա ընտանիքի հիմքերը:

Այնուհետեւ նա անդրադառնալով հայ պատմութեան էջերում յաւերժացած հայուհիներին, ինչպիսիքն են Աւարայրի ճակատամարտում զոհուած Զիկ տիկինը, Արշակ երկրորդ թագաւորի կին Փառանձեմ թագուհին, Հայոց Ցեղասպանութեան ճիրաններից փրկւած որբերին պաշտպանող Պարտիզայան քոյրերը, Սերոբ Աղբիւրի կին հերոսուհի Սօսէ Մայրիկը, առաջին հայ կին դեսպան Դիանա Աբգարը եւ արցախեան ազատամարտում սխրագործ հերոսուհիները, կարեւորեց նրանց նշանակալի դերն ու անձնագոհութիւնները՝ ի խնդիր հայ ժողովրդի գոյատեւման ու բարօրութեան:



Տկն. Տէր-Մարտիրոսեանն իր խօսքի աւարտին նշեց, որ մայրն իր ամբողջ զոհաբերութեան եւ նւիրածութեան դիմաց վարձատրուում է միայն հոգեկան եւ բարոյական արժէքներով՝ հասարակութեան մէջ իր զաւակի յաջողութիւնները տեսնելով, ապա անդրադառնալով հայապահպանման վսեմ գաղափարի առումով իզական սեռին վերապահուած չափազանց կարեւոր դերին, աւելացրեց, այսօր հայ մայրերը պէտք է նեցուկ հանդիսանան հասարակական կեանքում միմեանց շաղկապած օղակներին՝ ընտանիքին, դպրոցին եւ միութիւններին՝ յանուն հայեցի դաստիարակութեան, բազմադարեան մշակութային հարստութեան պահպանման, արցախեան գոյամարտի յաղթութեան եւ մեր վերջնական ու միասնական վեհ գաղափարախօսութեան՝ ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանի կերտման:

Երեկոյի յաջորդ բաժնում տեղի ունեցաւ մրցույթ, որտեղ ցանկացող իւրաքանչիւր մայր ու տատիկ կազմեց առանձին խումբ, եւ խմբերի մրցակցութեան արդիւնքում պարգեւատրուեց յաղթողը:

Աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն:

Հարկ է նշել, որ տատիկներին նւիրուել էին կրծքանըշաններ, իսկ մայրերին յուշանւէրներ:





**«ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ. ԱԴԻՔԵՋԱՆ» ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴԻՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ**

Չորեքշաբթի՝ 2016 թվականի ապրիլի 6-ին, Ն.Ջ. Հայոց Ազգային «Կատարիներ» տղայոց միջնակարգ դպրոցում, նախաձեռնությամբ դպրոցի աշակերտ Բաֆֆի Դիլանջեանի, տեղի է ունեցել «Պատմության կեղծարարները. Ադրբեջան» ֆիլմի ցուցադրություն:

տեղի հաաստի աղբյուրների լրատվությանը, տեղեկացած լինել եւ քարոզչություն տանել իրանցի հայրենակիցների շրջանում:



Աշակերտությանը հակիրճ բացատրություն է տրվել վերջին օրերին ԼՂՀ եւ Ադրբեջանի միջեւ ընթացող պատերազմի մասին: Այնուհետեւ փոխանցել է, որ թշնամի երկրի միջոցով տարուղ նենգամիտ քաղաքականությանն պլանում տարածող ապատեղեկատվության դեմ պայքար տանելու համար անհրաժեշտ է հե-

Այնուհետեւ պարսիկ ուսուցիչները միացան աշակերտներին ու դիտեցին «Ադրբեջանի Հանրապետության պատմությունը՝ համաշխարհային պատմության մեծագույն սուտը»:

Ներկայ են եղել նաեւ դպրոցի տեսչությունը, հայ եւ պարսիկ ուսուցիչներ:



**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ՎԱՏԱՐԻՆԵԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍ. ՏԱՐԵՆԵՐՋԱՆԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Կիրակի՝ ապրիլի 17-ի երեկոյան, Նոր Զուղայի Հայոց ազգային կրթահամալիրի «Ալեյնուշ Տէրեան» դահլիճում տեղի ունեցաւ «Քանանեան» աղջկանց եւ «Կատարիներ» տղայոց միջնակարգ դպրոցների 2014-2015 ուսումնական տարեշրջանի շրջանաարտ աշակերտությանն ասարտական հանդիսությունը:

ները, «Կատարիներ» ու «Քանանեան» դպրոցների անձնակազմը եւ շրջանաարտների հարազատները:

Աւարտական ձեռնարկը, որն այս տարի նկիրւած էր «Քանանեան» եւ «Կատարիներ» դպրոցների հիմնադրման 115-ամեակին, սկիզբ առաւ դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանի ողջուցի եւ շնորհաւորանքի խօսքով:



Երեկոյին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանը, ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչ-

Այնուհետեւ ներկաների բուռն ծափողջոյնների ներքոյ սրահ մուտք գործեցին շրջանաարտ աշակերտ-ուհիները: Սկզբում Նարեգա Սիմոնեանը, Վանայ Զոհրաբեանը, Քաջայր Կրապետեանը, Նարէ Վարդանեանը, Վանէ Թահմազեանը, Նազէ Ասատրեանը, Մերիկ

Կարապետեանը, Սինթիա Մինասեանը, Արինէ Իսաղուկեանը, Վանէ Ծահնազարեանը, Փրենի Ղազարեանը եւ Անի Ղազարեանը ներկայացրին յրեւելար դպրոցների պատմական անցեալն ու ներկան՝ պաստառի վրայ ցուցադրող համահունչ լուսանկարներին զուգահեռ: Նրանք արտայայտեցին նաեւ սրտաբուխ երախտիքի խօսքերով ու բարեմաղթանքներով՝ ուղղած հայ դպրոցին, ուսուցիչներին, ծնողներին ու ընկերներին: Ապա աշակերտական խօսքն ընթերցեց Ծաղիկ Մատթեոսեանի եւ Բաֆֆի Դիլանչեանի միջոցով:

Գեղարեստական բաժնի շարունակութեան մէջ խմբական եւ անհատական կատարումներով հնչեցին հայրենասիրական եւ հայ դպրոցին ու ուսուցիչն նկրած երգեր, իսկ հայրենասիրական երգերի շարանում ուշագրաւ էին յատկապէս հայրենիքը պաշտպանող զինուորին ու ազատամարտիկին նկրած կատարումները, որոնք խորապէս յուզեցին հանդիսատեսին:



Երգերի մենակատարմամբ հանդէս եկան Թահիա Մինասեանն ու Քրիստինէ Օհանեանը, իսկ կիթառի նագակցութեամբ մենակատարներին ընկերակցեցին Վանէ Ղազարեանը, Ծանթ Սարեանըն ու Մամբրէ Թահմազեանը: Սոյն բաժնի աւարտին աւանդոյթի համաձայն տեղի ունեցաւ շրջանաւարտների երդման կարգը, որն ընթերցեց Վանիա Պետրոսեանի եւ Էջմին Յովսէփեանի միջոցով ու հաստատում գտաւ խմբի միասնական «Երդում եմ» արտայայտութեամբ:

Ծարունակութեան մէջ Կրթական խորհրդի խօսքն ընթերցեց ատենապետուհի Սաթօ Աւետումեանը, որն սկիզբ առաւ առիթի կապակցութեամբ շնորհատրանքի խօսքով: Նա շեշտելով, որ ընտանիքից յետոյ հայկական վարժարաններում հայ երիտասարդի մէջ ձեւաւոր-

ւում եւ արմատաւորում է ազգային պահանջատիրութիւնը եւ մասնաւորապէս անդրադառնալով այսօրայ պայմաններում ադրբեջանական ոտնձգութիւնների դէմ հայրենիքը պաշտպանող հայորդիների սիրագործութիւններին, շրջանաւարտներին կոչ արեց՝ գուրգուրել ու խնամել ազգի պահպանման բաբախուն սիրտը՝ հայկական վարժարանները, հաւատարիմ մնալ ծնողների եւ ուսուցիչների միջոցով իրենց մէջ սերմանած սկզբունքներին, աշխատել ջանասիրաբար, մասնագիտանալ գիտութեան աշխարհում եւ իրենց մասնագիտութիւնը ծառայեցնել հայ ժողովրդի ընդհանրական շահերին: Տկն. Աւետումեանն իր խօսքի աւարտին ջանադիր աշխատանքի համար՝ դրատանքի խօսք ուղղեց հայոց ազգային դպրոցների տեսչութիւններին, ուսուցչական կամզերին ու Ծնողական խորհուրդներին:



Այնուհետեւ իրականացեց վկայականների բաշխման արարողութիւնը, որտեղ դպրոցն աւարտած երիտասարդներն իրենց ջերմեռանդ աշխատանքի արդիւնքը հաստատող վկայագրերն ստացան թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ պատկան ուսուցիչների ձեռամբ:

Ապա թեմակալ առաջնորդն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին, որտեղ գնահատանքի խօսք ուղղեց Կրթական խորհրդին, «Կատարիներան» ու «Քանանեան» դպրոցների անձնակազմին եւ Ծնողական խորհուրդներին, ապա դիմելով շրջանաւարտներին՝ շնորհաւորեց դպրոցական շրջանն աւարտելու կապակցութեամբ: Նա մատնանշելով այն նոր ճանապարհը, որն այսօրանից բացելու է շրջանաւարտների առջեւ, նրանց յորդորեց, թէ ինչ ասպարէզում էլ իրենց կրթութիւնը շարունակեն եւ ասպազայում ինչ հանգամանք էլ ունենան, գիտակցաբար լինեն հայութեան հետ ու հայութեան համար եւ իրենց ամբողջական կամքն ու ուժը տրամադրեն հայ ազգին, քանի որ այդպիսով ոչ միայն մեծանալու եւ զօրանալու են իրենք, այլեւ մեծացնելու եւ զօրացնելու են հայրենիքը:

Վերջում շրջանաւարտները լուսանկարեցին, ապա միասնաբար աւարտական գլխարկները վեր նետելով, եզրափակիչ վերջակէտը դրեցին իրենց երկար տարիներ դպրոցական կեանքին:

Յատկանշական է, որ զոյգ դպրոցների տնօրինութիւնների որոշմամբ երեկոյի առթիւ ներկաների կատարած նկրատութիւնները յատկացելու է Արցախին զօրակցելու գործին:





**«ՎԻԿՏՈՐԻՆԱ» ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ «ՔԱՆԱՆԵԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ ԱՆԱԿԵՐՏՈՒՎՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՐԲ**

Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջ. միջնակարգ դպրոցի տնօրինության նախաձեռնությամբ եւ ուսուցչական կազմի կազմակերպությամբ, «Վիկտորինա» գիտելիքների մրցույթը տեղի ունեցաւ երկուշաբթի՝ ապրիլի 25-ի երեկոյեան, հայոց ազգային կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում՝ ներկայացնելով Հայոց Ցեղասպանության 101-ամեակին եւ արցախեան հերոսամարտին: Միջոցառումը հովանաւորել էր Հայոց Ցեղասպանության 101-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի կողմից:



Ընդհանուր գիտելիքների շրջագծում կազմակերպուող «Վիկտորինա» մրցույթին այս անգամ մասնակցել էին միջնակարգի առաջին բաժնի (ուղեցոյց) բոլոր աշակերտուհիները, իսկ որպէս հանդիսատես՝ իրենց ներկայությամբ եւ բուն ծափողջոյններով մասնակիցներին խրախուսեցին Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի եւ Հայոց Ցեղասպանության 101-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի ներկայացուցիչները եւ աշակերտուհիների ծնողները:



Միջոցառման գլխավոր կազմակերպիչն էր ուսուցչուհի Սեդա Դիլանջեանը, ով ընկերակցությամբ ուսուցչուհիներ Սիւնէ Մինասեանի եւ Կարին Տէր-Մարտիրոսեանի յանձն էր առել հարցաշարի պատրաստման բարդ աշխատանքը: Նախքան ծրագրի մեկնարկը դպրոցի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանը ողջունելով ներկաներին՝ բացատրությամբ հանդէս եկաւ մրցույթի կազմակերպման նպատակների մասին, կարեւորությամբ ընդգծելով, որ մրցույթը ներկայումս է յատկապէս Արցախում մարտնչող

սիրագործ հերոսներին: Տկն. Սիմոնեանն իր ելոյթի աւարտին շնորհակալական խօսք ուղղեց 101-ամեակի ոգեկոչման յանձնախմբին՝ ծրագրի հովանաւորը հանդիսանալու եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Ընդհանրական» գրադարանի գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանին՝ այս շրջագծում կազմակերպիչների հետ ցուցաբերած համագործակցության համար:

Այնուհետեւ սկիզբ առան մրցութային բաժինը՝ Կարին Տէր-Մարտիրոսեանի հաղորդավարությամբ: Առաջին փուլի հարցերը կազմած էին յատկապէս հայոց պատմության մէջ յանրաժամանակ դէպքերի ու դէմքերի մասին, որոնց պատասխանեցին բոլոր խմբերը: Այնուհետեւ արհեստավար իրաւարար կազմի անդամներ՝ Ռիմա Սիմոնեանի, Սեդա Դիլանջեանի եւ Սիւնէ Մինասեանի միջոցով գնահատուեցին տրուած պատասխանները եւ արդիւնքների ամփոփումից յետոյ, երեք լաւագոյն խմբերն անցան եզրափակիչ փուլ: Սույն փուլի ընթացքում մասնակիցները պատասխանեցին հոմանիշ բառերի շուրջ կազմած հարցերին, ճարտասանությամբ ելոյթ ունեցան ցուցադրող պատկերների կապակցությամբ եւ սեղմ ժամկէտում պատրաստեցին փազելներ:



Աւարտին յաղթող խումը պարգեւատրուեց Կրթական խորհրդի ու 101-ամեակի ոգեկոչման յանձնախմբի ներկայացուցիչների, ինչու չէ նաեւ ուսուցիչների միջոցով: Յաղթող խմբի անդամներն էին՝ Տաթևիկ Տէր-Մարտիրոսեանը, Քրիստին Մարկոսեանը, Փիւնիկ Այազեանն ու Միւնէ Յարութիւնեանը:

Վերջում արտայայտուեցին Կրթական խորհրդի անունից Սոնիկ Բաղումեանը, իսկ 101-ամեակի ոգեկոչման յանձնախմբի կողմից Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ովքեր բարձր գնահատեցին «Վիկտորինա» մրցույթը՝ իր կազմակերպութեան, մասնակիցների մօտ առաջացրած եռուզեռի ու խանդավառութեան եւ յատկապէս գիտելիքների մակարդակի համար: Հանդիսատեսը նույնպէս բարձր գնահատեց իրականացած միջոցառումը:

### ԻՐԱՆԱՀԱՅ 28-ՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների հիմնադրման 25-ամեակին նվիրած՝ Իրանահայ 28-րդ Գարնանային խաղերի մեկնարկը տրեց հինգշաբթի՝ մարտի 17-ի ժամը 17:00-ին, Ս. Ամենափրկչեան վանքի բակում վեր խոյացած Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանի մօտ, ուր հանդիսաւոր արարողութեամբ, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը խորհրդանշական ջահը վառեց յուշարձանի անմար կրակով, եւ այն օրհնելուց յետոյ յանձնեց ջահակիր խմբին, ովքեր վազքով ջահը փոխադրեցին Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնատեղ:



Ուրբաթ՝ մարտի 18-ի ժամը 19:30-ին, միութեան մարզարահում, ներկայութեամբ հոգեւոր հայրերի, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ ճարտ. Ասատգաղեգեանի, Սպահան նահանգի սպորտի եւ երիտասարդութեան հարցերի կազմակերպութեան գերատեսուչ դոկտ. Սոլթան-հոսէյնիի, Թեհրանի եւ Սպահանի պաշտօնական այլ հրաւիրեալների, մարզական պատվիրակությունների եւ հոծ բազմութեան տեղի ունցաւ խաղերի բացման շքեղ հանդիսությունը:

Ներկաներին հայերէն եւ պարսկերէն լեզուներով ողջունեց հանդիսավարուհի Մանիա Ղուկասեանը, ապա մասնակցութեամբ միութեան «Սկսուտական» միաւորի Արի-Արեւուշական հատուածների եւ Երէց փաղանգի ներկայացուցիչների տեղի ունեցաւ դրօշակի արարողությունն ու ներկաների յոտնկալս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլամական Հանրապետութեան օրհներգը:



Յաջորդիւ ներկաների բուն ծափողջոյնների ներքոյ տեղի ունեցաւ մասնակիցների հանդիսաւոր շքերթը, մասնակցութեամբ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան եւ նոյն կազմա-

կերպութեան Թարիզի մասնաճիւղի, Հայ Մ. «Սիփան», Հայ ուս. «Զհարմահալ» եւ Հայ Մ. «Սարդարապատ» միութիւնների, Հայ Մ. «Րաֆֆի» համալիրի, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ նոյն միութեան Ծափնշահրի մասնաճիւղի մարզական պատվիրակությունների:



Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան ողջոյնի խօսքով հանդէս եկաւ վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը եւ ասաց. *«Իրանահայ 28-րդ Գարնանային խաղերը նւիրւած է Հայաստանի եւ Արցախի անկախութեան 25-ամեակին: Իւրաքանչիւր հայ հպարտանում է իր երկրի անցեալով, ներկայով ու առաւել եւս ապագայով եւ այդ հպարտութեան զգացումն ու ապագայի նկատմամբ ունեցած փայլուն տեսլականն է, որ խթան հանդիսացան մեզ՝ իրանահայ 28-րդ Գարնանային խաղերը նւիրել նշւած բարեբաստիկ երկու առիթներին, խորապէս համոզւած լինելով, որ մեր երիտասարդ ու ծաղկափթիթ Հայաստանն ու Արցախն առաւել են հզօրանալու, քանի դեռ հայրենիքում ու սփիւռքում ունենք երիտասարդների այնպիսի բանակ, որոնց ներկայացուցիչներն այսօր համախմբել են այստեղ: Մեր Հայաստանին ու Արցախին մաղթում ենք յուսապայծառ ապագայ, յաղթանակներ եւ որ ամենակարեւորն է՝ խաղադուլթիւն, իսկ բոլոր մարզիկներին յաջողութիւն եւ առողջ մրցակցութիւն»:*

Յաջորդիւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը իր ողջոյնի խօսքում, շնորհաւորելով միութեան կենտրոնական վարչութեանը, ենթակալ միաւորներին, կազմա-



կերպիչ յանձնախմբին ու անհատներին, մաղթեց նրանց ուժ եւ կորով՝ շարունակելու իրենց ազգաներ ու հայանպաստ առաքելութիւնը: Նա դիմելով մարզիկ-ուրիներին՝ շնորհակալութիւն յայտնեց խաղերին մասնակցելու համար եւ կոչ արեց ձեռք-ձեռքի բռնած քայլել յաղթական եւ դառնալ մասնակիցները մեր պատմութեան կերտումի:



**Գերշ. Սրբազան Հայրը բարձր գնահատելով խաղերի կազմակերպումը եւ այն մտաշղացումը, որ խաղերը նկատել են Հայաստանի ու Արցախի անկախութեան 25-ամեակին՝ ասաց.** *«Քառորդ դար է անցել վերանկախացումից. Հայաստանն ու Արցախն այս տարիների ընթացքին ունեցան քաղաքական ու տնտեսական վերիվայրումներ, ձախողութիւններ ու ձեռքբերումներ: Արցախում շարունակուեց է ազատագրական պայքարը, հայոց բանակը եւ հայ զինուորը սահմանագծում պաշտպանում է մեր ժողովրդի արժանապատուութիւնն ու ազատ կեանքը: Մենք երազում էինք Հայաստանն ու Արցախը տեսնել ազատ, շէնացնել ու համախումբ ապրել. վերանկախացումից 25 տարի անց ի՞նչ ենք անում, ո՞ւր ենք գնում... ուրիշ ի՞նչ ծառայելու, օտարի՞ հողը մշակելու, օտարանալով... 25-ամեակը առիթ է իւրաքանչիւր հայի համար իր ուխտը վերանորոգելու, զօրավիզ լինելու հայրենիքին, մասնակից լինելու հայրենաշինութեան մեծ գործին եւ կառչած մնալու արիւննով գնւած սեփական սուրբ հողին»...* **«Այս է միակ ճանապարհը հայութեան... յաւերժութեան»,-** եզրակացրեց գերշ. Սրբազան Հայրը:



Ելոյթների շարանում խօսք տրեց Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամատու Ռոբերտ Բեգլարեանին: Պրն. Բեգլարեանը ողջունելով բոլորի, ի մասնատրի պետական եւ պաշտօնական հրաւիրեալների ներկայութիւնը, ասաց. *«Մարզական նման փառատօների կազմակերպումը,*

*անշուշտ կառուցւած է մշակութային հիմքերի վրայ եւ սպորտից բացի՝ օգնում է նաեւ մշակութային աշխատանքների զարգացմանը: Նման միջոցառումները ոչ միայն կախւած են որեւէ հասարակութեան եւ այս պարագային իրանահայութեան կարողականութեանը, այլ պայմանաւորւած են նաեւ տւեալ հասարակութեան իշխանութեանը, որը կոչւած է ենթահող ստեղծել հասարակութեան անդամների համար, որպէսզի կարողանան նման ասպարէզներում իրենց դրսեւորել եւ օգտակար հանդիսանալ զանազան ոլորտների զարգացմանը»:*



Խորհրդարանի պատգամատուրն անդրադառնալով երկրի մարզական, արհեստի ու արւեստի, գիտութեան եւ այլ ոլորտների զարգացման գործընթացում իրանահայութեան ներկայութեանն ու մասնակցութեանը, կարեւորութեամբ ընդգծեց հայ-իրանական բարեկամութեան վաղեմութիւնը եւ նշեց. *«Գա պատմական այնպիսի խոր հիմքեր ու արմատներ ունի եւ այնպէս է միահիւսւած մէկը միւսին, որ հնարաւոր չէ միմեանցից բաժանել»:* Պրն. Բեգլարեանը դիմելով մարզիկ-ուրիներին կոչ արեց՝ չմոռանալ, որ իրանահայեր են եւ կոչւած են պահպանելու ու զարգացնելու դարերի ընթացքում ձեռք բերւած հայ-իրանական բարեկամութիւնն ու միասնականութիւնը:

Այս առթիւ շնորհատրական ուղերձ էին յղել Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթչեանը եւ Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհուրդը:

Յաջորդ բաժնում ներկայները դիտե-



ցին մարտի 17-ին տեղի ունեցած ջահավառության արարողությունից եւ ջահը «Արարատ» միութեան կենտրոնատեղի փոխադրելու ընթացքից պատրաստած տեսանիւթը, ինչը շարունակւեց ջահակիր խմբի խանդավառ մուտքով, ովքեր ներկայացնում էին՝ միութեան աղջ. բասկետբոլի խմբի անդամուհիներ Լուսինէ Ասատրեանը, Լուսինէ Սէթ-Աղայեանը, Արիգա Փուլադին, Սելին Խոջամալը, Նինել Մարկոսեանը, Անայիս Խուրավերդեանը, Նարէ Կիրակոսեանը, Սարա Ներսիսեանը, Մարինէ Հայրապետեանը, Արծիկ Ղազարեանը, որոնց յաջողել էր արձանագրել փայլուն յաջողութիւն եւ մուտք գործել սուպերլիգայի Բ կարգի մրցոյթներում, Սպահան նահանգի «Հէյաթ բասկետբոլ»-ի անդամակցութիւնը նաճած՝ Անիա Թորոսեանը, Մինելի Ղազարեանը եւ Մանէ Յովսէփեանը, մարմնամարզութեան (բադմինթոն) մարզաձեւում երկրի մակարդակում յաջողութիւն արձանագրած Էդիկ Մարկոսեանը եւ գլխավոր ջահակիր Նորիկ Օհանեանը, ում ձեռամբ բոցավառւեց 28-րդ Գարնանային խաղերի խորհրդանշական ջահը:



Յաջորդ բաժնում իրաւարար կազմի եւ մարզիկների ներկայացուցիչների միջոցով տեղի ունեցաւ արդար պայքարի եւ արդար դատարարութեան երդման կարգ:

Գեղարուեստական բաժնում միութեան Մշակութային միաւորի «Կուունկ» համոյթը, գեղարուեստական ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի եւ Կարին Տէր-Մարտիրոսեանի, ասմունքի, պարի եւ համահունչ երգ-երաժշտութեան համադրութեամբ հանդէս եկաւ «Նոյեան հանճարեղ ջրհեղեղից մինչ ազատն Արցախ» խորագրով, Հայոց աշխարհի պատմական դրագների ներկայացումով:

Պարային համարները կատարւեցին պարուստց Նունէ Մկրտչեանի ղեկավարութեամբ: Հայաստանին ու Արցախին նկիրած երգերի կատարմամբ ելոյթ ունեցան Ռայիսա, Մելանի եւ Սոփի Աւանեսեանները:

28-րդ Գարնանային խաղերի փակումը տեղի ունեցաւ մարտի 23-ին: Ժամը 19:00-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան

մարզապահում, իրանահայ 28-րդ Գարնանային խաղերի մեղաւաքաշխման արարողութիւնը կայացաւ տղայոց երէց բասկետբոլի եզրափակիչ խաղից առաջ, որից յետոյ հոծ բազմութեան բուռն խրախուսանքների ներքոյ տեղի ունեցաւ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան եւ Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան բասկետբոլի եզրափակիչ հանդիպումը: Սեղմ մրցակցութեան արդիւնքում խաղն աւարտւեց յօգուտ Հ.Մ.Ա.Կ.-ի: Երեկոն փակւեց տղայոց երէց բասկետբոլի խմբերի մրցանակաբաշխման արարողութեամբ:



Վկայագրերը, մեղաւերն ու գաւաթները յանձնեցին միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանը, միութեան Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների եւ Կազմակերպիչ յանձնախմբի անդամ-ուհիները:



Երեկոն վարեց Ալինա Տէր-Սուքիասեանը:

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան



Կենտրոնական վարչութեան կազմակերպած վերոնշեալ մարզական փառատօնի իրականացման գործում, համագործակցութիւն էին բերել 28-րդ Գարնանային խաղերի Կազմակերպիչ յանձնախումբը, միութեան Մարզական, Մշակութային, Երեւցների, Սկաուտական եւ Ուսանողական միաւորները, Կարգապահական կազմը, Ֆուտբոլի յանձնախումբը եւ անհատներ, նաեւ մասնակից կազմակերպութիւններ:

րի ու միութիւնների պատասխանատուները, մարզական խմբերը, մարզիչները եւ իրաւարար կազմը: Մարզաճիւղերում մրցադաշտ իջան Թեհրանի, Թաւրիզի, Շահինշահրի եւ Նոր Ջուղայի 8 մարզական խմբեր:



**ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՀԱՒԱՔ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ԸՆԴԴԷՄ ԱՐՅԱԽՈՒՄ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ**

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Ս. Բարգէն արք. Չարեանի եւ կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան, երեքշաբթի՝ ապրիլի 5-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Ս. «Արարատ» միութեան սրահում, մասնակցութեամբ հոծ թուով ժողովրդի, իրականացւեց համահաւաք՝ ի բողոք դարաբաղա-ադրբեջանական սահմանում Ադրբեջանի նախաշարձակ ուղղման գործողութիւնների եւ ի զօրակցութիւն Լեռնային Ղարաբաղի իշխանութեան ու ժողովրդի:

ները եւ հայ ու օտար երկրացի պետական բարձրաստիճան պաշտօնատարների արտայայտութիւնները այս շրջագծում:



Երեկոն սկիզբ առաւ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան խօսքով, որն ընթերցւեց Կարէն Խանկարեանի միջոցով: Սոյն խօսքում դատապարտելով Ադրբեջանի ուղղման գործողութիւններն ու վերահաստատելով համայնքի երիտասարդների զօրակցութիւնը Արցախի ժողովրդին, ասած էր. «Մեր սերունդը ի վիճակի ու պատրաստակամ է իր հերթին ամրացնել ու խորացնել հայրենիքի անկախութեան, ինքնիշխանութեան եւ ազատութեան արմատներն իր մարտունակութեամբ, իր գիտական մտքով, տեխնոլոգիական ու հաղորդակցական իր հակայական հմտութիւններով ու նորարարութեամբ, քաղաքական ու դիւանագիտական իր իմացականութեամբ: Հենց այս կարողութիւններով գինւած մենք ծնկի կը բերենք մեր դարաւոր թէ նորեկով թշնամիներին, որոնք ատամ են սրել մեր մի բուն հայրենիքի համար»:

Շարունակութեան մէջ արտայայտւեց շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւիթեանը, որը դատապարտելով թշնամու ուղղման սադրիչ գործողութիւնները եւ յատկապէս հայկական բնակավայրերին ու խաղաղ բնակչութեանն իր յարձակումների թիրախ դարձնելու նրա անբարոյ գործելակերպը, կարեւորութեամբ ընդգծեց, որ Ադրբեջանի ուղղման քաղաքականութեան պատճառով վտանգում է Հարաւային Կովկասի ու տարածաշրջանի կայունութիւնը: Նա աւելացրեց նաեւ, որ Նոր Ջուղայի Հայ Դատի յանձնախումբն իր բոլոր կառուցներով, համայնքում աշխատող միութիւններով ու հայրենակիցներով, իր ամբողջական զօրակցութիւնն է յայտնում Արցախի եւ Հայաստանի պետական կառուցների՝ պատրաստ լինելով գործնականապէս սատարելու հայ ժողովուրդին, ապա պահանջեց՝ ԵԱՀԿ Մինսկի խմբից եւ համանախագահող երկրներից ու երրօրակց կառուցներից նախաշարձակ ադրբեջանական կողմին պարտադրելու դադարեցնել ուղղման գործողութիւնները:

Երիտասարդների խօսքին յաջորդեց տեսանիւթի ցուցադրումը, որտեղ լուսարձակի տակ էին առնել վերջին օրերի ընթացքում դարաբաղա-ադրբեջանական սահմանում իրականացւած ուղղման գործողութիւն-

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը, ով գնահատելով հայ զինուորի ու ժողովրդի հերոսութիւնները հայրենիքի պաշտպանութեան գործում եւ դատապարտելով թշնամու ոտնձգութիւնները, ասաց. «Մենք՝ որպէս Քրիստոսի յարուստներ հաւատացող ժողովուրդ, խաղաղութեան կողմնակից ենք, սակայն երբ սուրբ բարձրանայ մեր գլխին, կը



*կոտրենք այդ սուրբ երբ թշնամին փորձի մեզ ծնկի բերել, ինքը ծնկի կը գայ, քանի որ Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ մեր ժողովրդի թանկ արիւնից ծնւել են նոր հերոսներ, ովքեր ընկճւել չգիտեն եւ ամուր են իրենց կեցածքի վրայ»:* Սրբազան Հայրը թեմի ազգային մարմինների զօրակցութիւնը յայտնելով Արցախին՝ կոչ արեց աշխարհասփիւռ հայութեանը՝ շարունակելով իր միակամ կեցածքը, աշխուրջ ու զգօն լինել թշնամու տարբեր գործողութիւնների նկատմամբ: Գերշ. Ս. Բաբգէն արք. Չարեանը վերջում խնդրեց Իրանի պետութեանը՝ ինչպէս միշտ իր դրական դերակատարութիւնը ցուցաբերել տարածաշրջանում խաղաղութեան հաստատման գործում:

Համահաւաքի աւարտին Վանայ Թիրանեանն ընթերցեց երեկոյի բանաձեւը, ուր դատապարտուել էր Ադրբեջանի ռազմական սադրիչ գործողութիւնները, թեմիս ժողովրդի ամբողջական զօրակցութիւնն էր յայտարարուել՝ Արցախի եւ Հայաստանի պետական կառոյցներին ու ժողովրդին եւ պահանջուել էր Ե.Ա.Հ.Կ. Մինսկի խմբից ու համաճախագահող երկրներից Ադրբեջանին պարտադրելու դադարեցնել իր ռազմական գործողութիւնները եւ վերադառնալ բանակցութիւնների սեղանին:  
Վերջում բողոքարկողներն սրտաբուխ նւիրատուութիւններ կատարեցին՝ Լեռնային Ղարաբաղի իշխանութեանը եւ արցախահայութեանը զօրակցելու համար:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՏԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԶԱՏԿԱԿԱՆ ԵՒ ՆՈՐՈՒՉԻ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌԲԸ**



Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութեան Ս. Յարութեան տօնի եւ Նորուզի նախաշեմին, հինգշաբթի եւ ուրբաթ՝ մարտի 3-ին եւ 4-ին, բարեսիրական ցուցահանդէս-վաճառք էր կազմակերպուել՝ հայ եւ պարսիկ հայրենակիցների համար,

ընկերութեան երկրորդ հաւաքատեղիում:  
Այցելուներն առիթ ունեցան դիտելու խնամքով դասատուած ցուցահանդէսը, ուր վաճառքի էին հանուել հայ կանանց նրբաճաշակ եւ բարձրորակ ձեռքի գործեր, ասանդակական թիւածքներ, փայտից պատրաստուած իրեր, արհեստական ծաղիկներ եւ «Հաֆթ սին»-ի համար ձեւատուած սպասքներ:  
Ցուցասրահին կից նախատեսուել էր նաեւ ճոխ բիւֆէ:  
Ցուցահանդէս-վաճառքի կամգակերպման գործում համագործակցել էին Բարեգործական ընկերութեան բոլոր անդամուհիները եւ ամբողջ հասոյթը ծառայեցելու է բարեսիրական աշխատանքների իրագործմանը:



### **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՉ ՆԱՐԵԿ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

Նախաձեռնությամբ Նոր Զուղայի Հայուհեաց բարեգործական ընկերության, չորեքշաբթի՝ ապրիլի 6-ի երեկոյեան ժամը 8-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միության դահլիճում տեղի ունեցավ «Ծանթ» հեռուստաընկերության «Ժողովրդական երգիչ» նախագծի շրջագծում 2-րդ կարգը զբաղեցրած Նարեկ Պողոսեանի համերգը:



Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, ազգային մարմինների, միությունների եւ դպրոցների ներկայացուցիչներ եւ հանդիսատես:



Սկզբում ողջուցի խօսքով հանդէս եկա երեկոյի հանդիսավար, Բարեգործական ընկերության «Փարոս» ասմունքի խմբի անդամուհի՝ Վանայ Զոհրաբեանը, ով իր խօսքում անդրադառնալով

հայեցիքը պաշտպանող զինուորների սխրագործություններին, ասաց. «Հաւատա՛նք նրանց, հաւատանք, որ հերթական սաղրանքից դուրս են գալու աւելի գորացած, հաւատանք նրանց ու ի խորոց սրտի մեր աղօթքներն ուղղենք առ Աստուած, որ պահի ու պաշտպանի մեր նաչրեան երկիրը նենգ թշնամիներից ու ահաբեկիչներից»:

Ապա մէկ րոպէ յոտնկայս լուծությամբ յարգւեց Արցախում զոհիած քաջարի զինուորների յիշատակը, որից յետոյ հանդիսավարուհին ներկայներին ծանօթացնելով Նարեկ Պողոսեանի կենսագրական գծերին, բեմ հրաւիրեց նրան:



Երգիչն իր ելոյթն սկսեց Արաբոյի երգով ապա ողջուցի խօսք ասելով ներկայներին, իր սրտի կսկիծն յայտնեց հայրենի Արցախի սահմանում թշնամու վայրագութիւնների մասին՝ յոյս յայտնելով, որ այդ դէպքերի աւարտը հայ ժողովրդի համար լաւ է լինելու եւ խաղաղութիւն է հաստատուելու հայրենիքում: Այնուհետեւ Նարեկը ծրագիրը շարունակեց ժողովրդական, աշուղական ու հայրենասիրական երգերի կատարմամբ ինչպիսիւն են՝ «Յիս քու դիմեթըն չիմ գիդի», «Հարսանեկան կատակ երգ», «Ա՛խ, իմ հայրենիքի ջուրը», «Գետաշէն» եւ այլն, որոնցով առաւել բարձրացրեց հանդիսատեսի խանդավառութիւնը:

Ընթացքում հանդիսավարի միջոցով ժողովրդական երգին ու երգչին անդրադարձով խօսքեր ընթերցւեցին, իսկ «Փարոս»-ի անդամուհի Մեդրի Կարապետեանը ասմունքեց «Զարմանալի հայ» բանաստեղծութիւնը:

Ծրագիրը եզրափակւեց թեմական առաջնորդ Սրբազան Հօր խօսքով, ով նշելով, որ հայրենիքն այսօր դժարութեան մէջ է եւ բոլորիս մտքի սետեակէտն այնտեղ է՝ մեր հերոսների, մեր տղաների, հայոց բանակի ու հայ զինուորի կողքին, իր ուրախութիւնը յայտնեց նման երեկոյի կազմակերպման համար: Ապա բարձր գնահատեց Հայուհեաց Բարեգործական ընկերության անդամների կատարած աշխատանքն ու Նարեկ Պողոսեանի ելոյթը եւ ասաց. «*Թող հայ ժողովուրդն իր այս միասնական կեցածքը, ոչ միայն այսօր, այլեւ յաւիտեան շարունակի, որովհետեւ այդ միասնութեան մէջ է մեր ուժն ամբողջական, մեր ազգի գոյատեւումը եւ յաւիտեանական փրկութիւնը*»:

Հարկ է նշել, որ Նարեկ Պողոսեանը ծրագրի ընթացքում իր ձայնասկաւառակների վաճառքից գոյացած բոլոր գումարը նւիրեց Լեռնային Ղարաբաղի իշխանութեանն ու ժողովրդին զօրակցելու համար:

**ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԳԵՂԵՅԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՁԵՌՆԱՐԿ՝ ՀԱՅՈՒՏԵԱՆՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶՅՈՒՆՈՒԹԵԱՄԲ**

Նոր Զուղայի Հայուհեաց բարեգործական ընկերության գեղեցիկ մտայղացմամբ այս տարի եւս Մայրության եւ գեղեցկության տօնի օրը, ապրիլի 7-ի երեկոյեան, տեղի ունեցաւ ձեռնարկ՝ նւիրած զոհողութեան ու նւիրումի խորհրդանիշ էակներին՝ հայ մայրերին: Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում իրականացաւ այս ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ ժողովուրդ:



Երեկոյի մեկնարկը տրւեց երկու հայկական պարերով Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» պարախմբի կատարմամբ:

Այնուհետեւ ողջոյնի եւ շնորհատրանքի շերմագին մաղթանքներով հանդէս եկան հանդիսավարներ՝ Վեհանուշ Խուրաբախշեանն ու Մարտունի Խաչիկեանը, որից յետոյ ասմունքներով ելոյթ ունեցան Բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներ՝ Վանէ Ծահնագարեանն ու Մեղրի Կարապետեանը, իսկ երգի կատարմամբ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամուհի Անասիկ Յովսէփեանը: Երգեցողութեամբ հանդէս եկաւ նաեւ Հայաստանից ժամանած ժողովրդական երգիչ Նարեկ Պօղոսեանը:



Ծրագիրը շարունակւեց օրւայ բանախօս հոգշ. Տ.

Անանիա վրդ. Գունանեանի գեղեցիկ ու ոգեւորիչ ելոյթով: Նա իր խօսքն սկսեց հետեւեալ տողերով. «Մայր, հազարաւոր խօսքերն անգամ անգօր են այս չորս տառանոց բառի դէմ: Որքան սէր, ջերմութիւն ու կեանք կայ մայր բառի մէջ: Մայրական քնքշանքն ու գուրգուրանքը ամենահաճելի բանն է, որն զգացել ենք բոլորս անխտիր»:



Բանախօսն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով Ս. Կոյսի աւետման տօնի խորհրդրդին՝ աւելացրեց. «Մենք կարիք ունենք վերընկալելու կանացի ոճն ու հմայքը, կանացի մտածողութիւնը, նրանից բխող սէրն ու հնարաւորութիւնները»:



Այնուհետեւ նա բացատրելով թէ ինչպէս է Հայաստանում կանանց միամսեակը տօն դարձել, նշեց. «Հայ ազգին բաժին ընկած պատմական ու քաղաքական դժուարին ուղին, հայ մօր մէջ նախեւառաջ գարգացրել է ընտանիքի մայր ու օջախի պահպան դառնալու եւ ամուսնուն նեցուկ հանդիսանալու առաքելութիւնը: Մեր մայրերից ստացած հայեցի դաստիարակութիւնը, դարձել է հայ ազգի յարատեւման գործօններից»:

Վերջում հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանն իր շնոր-







### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑԻԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութիւնը որպէս հաշոց ազգային ծերանոցի հիմնադիր եւ կառավարող հաստատութիւն, ազգային-եկեղեցական տօների առիթներով բազմաբնոյթ միջոցառումներ է կազմակերպում՝ ծերանոցի հարազատ յարկի ներքոյ:

Այս ծիրում վերջին երկու ամիսների ընթացքում կազմակերպել են մի շարք ծրագրեր, որոնց անդրադառնում ենք:



Տեառնընդատաջը ծերանոցում նշեց երկուշաբթի՝ փետրարի 15-ի երեկոյեան, արժն. Ս. Խաչատուր քինյ. Զարգարեանի միջոցով մատուցած արարողութեամբ: Քահանայ Հօրն ընկերակցում էին սարկաւազներ՝ Արմէն Բաղումեանն ու Ալբերթ Ղազարեանը: Արարողութեանը յաջորդեց ասանդական հրավառութիւնը, ապա ծերանոցի տարեց բնակիչներն ու աշխատողները, ինչու չէ նաեւ Կանանց գթութեան միութեան անդամուհիները, հիւրասիրեցին հրուշակով:



Ինչպէս նախորդ տարիները, Մեծ պահքի ժամանակաշրջանում ծերանոցում տեղի ունեցան «Նայեաց սիրով»-ի եւ Արեւագալի հոգեպարար արարողութիւնները: Երկուշաբթի՝ մարտի 14-ի երեկոյեան ժամը 4-ին,

արժն. Ս. Խաչատուր քինյ. Զարգարեանը եւ Արմէն սրկ. Բաղումեանը կատարեցին «Նայեաց սիրով»-ի կարգը:

Երեքշաբթի՝ մարտի 15-ի առաւօտեան ժամը 10-ին, Սպահանի հաշոց թեմի առաջնորդ գերշ. Ս. Բաբգէն արք. Զարեանն այցելեց ծերանոց, որտեղ նախագահեց Արեւագալի արարողութեանը: Սրբազան Հօրն ընկերակցում էին արժն. Ս. Խաչատուր քինյ. Զարգարեանը, արժն. Ս. Վազգէն քինյ. Քէօշկերեանը, դպրաց դասի ներկայացուցիչներ եւ «Շուշանիկ» երգչախմբի ու Կանանց հոգեւոր լսարանի անդամուհիները:

Կանանց գթութեան միութեան վարչութիւնը վերոնշեալ միջոցառումներից բացի՝ բարեսիրական նպատակներով ծրագրերի իրականացման ուղղութեամբ, այս տարի եւս Ս. Ամենափրկչեան վանքի ցուցասրահում կազմակերպել է ձեռքի աշխատանքների ցուցահանդէս-վաճառքը, որի բացումը կատարեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ, երեքշաբթի՝ մարտի 15-ի երեկոյեան ժամը 5-ին: Ամենամեայ այս միջոցառումը լայն առիթ է ընձեռում արւեստագէտ անհատներին՝ ի մասնաւորի բազմաշնորհ հայուհիներին՝ իրենց բարձրաճաշակ ու որակեալ ձեռքի աշխատանքները ցուցադրելու համար: Սոյն ցուցահանդէսում ուշագրաւ են յատկապէս սեղանի ծածկոցները, գործածքները, ասանդական թխածքները, զարդեղէնները եւ մանկական հանդերձանքը:



Վաճառքի աշխատանքը շարունակեց Նորուզի արձակուրդների ընթացքում եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարան այցելող զբօսաշրջիկներն առիթ ունեցան ծանօթանալ ցուցադրած հայկական ձեռարւեստին:

Աւանդոյթի համաձայն, կրպակների դասատրման եւ ձեռքի աշխատանքների վաճառման պարտականութիւնը սիրայօժար կերպով յանձն են առել Կանանց գթութեան միութեան անդամուհիները:

Վաճառքի հասոյթը ծառայեցելու է բարեսիրական ու հայրենասիրական նպատակներով ծրագրերին:



## ՀԱՅ ՄՕՐ ՏՕՆԻՆ ՆԻՐԻԱԾ ԶԵՌՆԱՐԿ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՅԻ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

Մայրերի տօնը Նոր Զուղայի հայոց ազգ. ծերանոցի յարկի ներքոյ նշեց ուրբաթ՝ ապրիլի 8-ի երեկոյեան ժամը 5-ին, մասնակցութեամբ ծերանոցի տարեց բնակիչների ու աշխատակազմի եւ Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան անդամուհիների: Ծրագրին հրաւիրել եւ ներկայ էր Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, ով ծերանոց էր այցելել թեմի Պատգամաւորական ժողովի Դիւանի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ Կրօնական խորհրդի անդամներ՝ ատենապետ Վարուժ Մովսիսեանի, Արմինէ Փանոսեանի եւ Սարգ Տէր-Յովհաննիսեանի ընկերակցութեամբ:



Սկզբում Հայ կանանց գթութեան միութեան անունից նոյն միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը բարի գալստեան խօսք մաղթելով Սրբազան Հօրը եւ նրան ընկերակցող ազգայիններին, շնորհաւորեց Մայրերի տօնի կապակցութեամբ եւ հրաւիրեց ներկաներին մէկ րոպէ յոտնկայս լուրջութեամբ յարգել վերջին օրերի ընթացքում Ադրբեջանի վայրագութիւնների հետեւանքով զոհուած հայորդիների յիշատակը: Այնուհետեւ նա յիշեցնելով, որ 2016 թականը Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից հռչակել է որպէս Ծառայութեան տարի, ընդգծեց, թէ հայ մօր մատուցած վեհ ծառայութիւններից է՝ հայրենասէր եւ ազգին նւիրեալ զաւակ դաստիարակելը:



Յաջորդի բանախօսական ելոյթով հանդէս եկաւ առաջնորդ Սրբազան Հայրը, ով սկզբում անդրադառնալով Մարիամ Աստուածածնի Աւետման տօնին, որը միաժամանակ Մայրութեան եւ գեղեցկութեան տօնն է եւ շեշտելով, որ իւրաքանչիւր մայր ինչպէս Ս. Կոյսը գեղեցկանում է իր զաւակի ծնունդով, ինչի պատճառով էլ Մայրերի տօնն անւանել է Մայրութեան ու գեղեցկութեան տօն, աւելացրեց. «Գեղեցկութիւնը կապւած է մօր տօնին, որովհետեւ մայրը չի կարող ուրիշ բան լինել, եթէ ոչ գեղեցիկ: Գեղեցկութիւնը արտաքին տեսքի

մէջ չէ. գեղեցկութիւնը ներքին աշխարհի մէջ է. այն ազնուութեան, սիրոյ հոգատարութեան եւ խնամատարութեան մէջ է եւ բնականօրէն գեղեցկութիւնը կապւած է մօրը եւ Մայրութեան տօնին»:

Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանն իր խօսքի մի այլ բաժնում կարեւորելով հայ կնոջ եւ մօր անժխտելի դերակատարութիւնը հայ ազգի պատմութեան ամենաժանր հանգրուաններում եւ անդրադառնալով նաեւ Ծառայութեան տարւան, նշեց հայ կնոջ նւիրական աշխատանքը եւ մատուցած ծառայութիւնները թէ իր ընտանիքում եւ թէ իր ազգի ու ժողովրդի նկատմամբ՝ յատկապէս օրինակ բերելով, Հայոց Ցեղասպանութեան տարիներին հայ կանանց միջոցով իրականացած որբախնամութեան լայնածաւալ եւ նւիրական աշխատանքը:



Վերջում թեմակալ առաջնորդը շեշտելով, որ մերօրեայ պայմաններում մայր լինելը հեշտ չէ եւ գնահատելով մեր հայրենիքը պաշտպանող զաւակների մայրերին՝ նման սերունդ դաստիարակելու համար, աղօթեց Բարձրեային՝ երկնային խաղաղութեան մէջ հանգչեցնի մեր նահատակներին, իսկ հայ ազգն ու հայրենիքը պաշտպանող հերոսներին պարգելի ուժ եւ անպարտելիութիւն, ապա ծաղկեպսակ գցելով Հայ կանանց գթութեան միութեան անդամուհի ժանեւո Այազեանի վզին, գնահատեց նրան՝ այնպիսի որդի դաստիարակելու համար, ով այսօր որպէս զինոր իր ծառայութիւնն է մատուցում հայրենիքին՝ Լեռնային Ղարաբաղի սահմանները պաշտպանելու գործին մասնակցի լինելով:



Բանախօսական ելույթից յետոյ ԱրմինԷ Սիմոնեանը յայտարարեց, որ Կանանց գթութեան միութեան 100-ամեակի յրբելեանական ձեռնարկի ընթացքում ի օգուտ Արցախի՝ ներկաների կատարած սրտաբուխ ներատուութիւնները, Կանանց գթութեան միութեան միջոցով

փոխանցել են Արցախ՝ Լեռնային Ղարաբաղի իշխանութեանն ու ժողովրդին զօրակցելու համար:

Այնուհետեւ ծրագիրը շարունակեց առաւել ջերմ ու մտերմիկ մթնոլորտի ներքոյ՝ ներկաների անհատական երգերի ու ասմունքների կատարմամբ, օրան պատշաճ բարեմաղթանքներով եւ ընդունելութեամբ:

Միջոցաւման աւարտին Սրբազան Հայրը Մայրութեան տօնի առթիւ ծաղիկներ նկիրեց Կանանց գթութեան միութեան անդամուհիներին ու ծերանոցի աշխատակազմին, իսկ տարեց բնակիչներին՝ ծաղիկներ եւ Քրիստոսի սրբապատկերով յուշանւէրներ: Թեմակալ առաջնորդն այցելեց նաեւ առողջական խնդիրների պատճառով ծրագրից բացակայող բնակիչներին՝ իրենց սենեակներում եւ աղօթեց նրանց շուտափոյջ առողջացման համար:



**«ԱՍՈՒՊ» ՆԻԱԳԱԽՈՒՄԲԵՆ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳՈՒՄ**

**ՌՈՒՔ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ ՀՆՉԵՅՐԵՅ «ԱԼԵՆՈՒԾ ՏԷՐԵԱՆ» ՍՐԱՀԻ ԲԵՄԻՅ**

Հովանաւորութեամբ Հայ ուս. «Չհարմահալ» միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութեան, ուրբաթ՝ մարտի 4-ի երեկոյեան, Նոր Զուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալեւուշ Տէրեան» սրահում իրականացւեց «Ասուպ» նազախմբի առաջին համերգը՝ ռոք երաժշտութեան անզուգական կատարումներով ողողւած:

լալներ ստացաւ յատկապէս, երբ խումբը կատարեց նաեւ իր հեղինակային երգերը:

Խմբի դաշնակահարն ու վոկալիստն Էր Դրօ Տէր-Մարտիրոսեանը, իսկ մի շարք երգերում մեներգչին ձայնակցում էին ռիթմ-կիթառահար Դաւիթ Թորոսեանն ու հարմոնիկա նագող Վահան Վարդեանեանը: Նազախմբի միւս երաժիշտներն էին՝ Վահէ Կարապետեանը՝ լիդ-կիթառ, Սերօ Տէր-Մարտիրոսեանը՝ բաս-կիթառ եւ Ադրիան Դաթեանը՝ հարւածային գործիքներ (դրամբ):



3-ամեայ «Ասուպ» նազախումբը ռոք կատարումներով բազմիցս հանդէս է եկել տարբեր ձեռնարկներում, ինչպիսիք են՝ Զաւախքին նկիրած փառատօնը եւ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկները, սակայն այս անգամ բեմն ամբողջութեամբ տրամադրւած էր իրենց, եւ ասուպիների հիասքանչ կատարումները մեծ խանդավառութիւն առաջացրեցին ռոքի սիրահար հանդիսատեսի մօտ: Ոգեւորութիւնն առաւել լայն ծա-



